

3268

3K33  
3-22



329.15(7-41)  
VI-94

XV ԿՈՒՍ. ԻՎԱԳՈՒՄԱՐ

Ի. ԱԽԱՐԵ

Համ. գ. 4. Հայոց հանչեղիքները  
Բաղադասական հանչեղիքները

ՊԵՏԻՐԱՑ ՅԵՐԱԿՆ 1928

Բ. Ա Ս Ա Լ Ի Շ

22 JUN 2009

393K33

Z-22

ԱՄ

16 NOV 2009

ՀԱՅ. Կ. Կ. ԿԵՆՏՎՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ X V ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

13963-557

274

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ



5 AUG 2013

3268

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱռավարության  
ԱՌԱՋԱԿԱՆ  
ՎՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՋԱԿԱՆ  
ՎՐԱՄԱՆ

I

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՋԱԿԱՆ ԱՌԱՋԱԿԱՆ ՎՐԱՄԱՆ ՅԵՎ  
Ա. Խ. Հ. ՄԻՋԱԹՅՈՒԽՆԵՐ

Հնկերներ, մեր յերկիրն ապրում եւ ու զարգանում կապիտալիստական շրջապատման պայմաններում: Նրա արտաքին դրությունը կախված է վոչ միայն իր ներքին ուժերից, այլ և այդ կապիտալիստական շրջապատման՝ մեր յերկիրը շրջապատող կապիտալիստական յերկիրների դրությունից, որանց ուժից ու թուլությունից, նաև ամբողջ աշխարհի ճնշված դասակարգերի ու այս դասակարգերի հեղափոխական շարժման ուժից ու թուլությունից: Ել չեմ խոսում այն մասին, վոր մեր հեղափոխությունը ճնշված դասակարգերի միջազգային հեղափոխության մի մասն ե: Անո, թե ինչու յեմ յենթագրում, վոր կե-ի հաշվետվությունը ողիտի սկսել մեր յերկիրի միջազգային վիճակի ուրվագծումից, ինչպես և կապիտալիստական յերկիրների ու բոլոր յերկիրների հեղափոխական շարժման դրության ուրվագծումից:

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱՄԱՆ ԿԱՌԱՋԱԿԱՆ ՎԿՈՆՈՄԻԿԱՆ  
ՈՒ ԱՐՏԱՎԵՐՆ ՇՈՒՆԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԴՎՈՂ  
ԿՈՎԵ ՄՐԳԵԼԸ

ա) Առաջին հարցը խոշորագույն կապիտալիստական յերկիրների արտադրության ու առևտրի դրությունն ե:

Հնկերներ, հիմնական փաստն այդ բնագավառում այն է, վոր կապիտալիստական յերկիրների արտադրությունն այս յերկու տարվա ընթացքում հաշվետվության յենթակա ժամանակաշրջանում, գերազանցել է նախապատերազմյան նորմաներին և ա-

Գրառեպար հ. 502 թ. 671 Տիրաժ 3000

Պետհրատի յերկրորդ տպարան—Յերեանում—1564

վելի ասած անցել: Ահա մի քանի տվյալներ այդ ժաման: Համաշխառային արտադրանքի ինդեքսը 1925 թվին կազմում էր նախապատերազմյանի 97,6 տոկոսը, 1926 թվին՝ արգեն 100,5 տոկոսը: 1927 թվականի լրիվ տվյալները չունենք, այլ միայն ասածին կիսամյակինը, վորոնք չուգումնի արտադրության համապատասխան մասին են վկայում: Պողպատի համաշխառային արտադրանքի ինդեքսը 1925 թվին կազմում էր նախապատերազմյանի 118,5 տոկոսը, 1926 թվին՝ 122,6 տոկոսը: Ածուխի համաշխառային արտադրության ինդեքսը 1925 թվին կազմում էր նախապատերազմյանի 97,9 տոկոսը, 1926 թ. վորոշ անկումն և հասնում է 96,8 տոկոսին: Ակնհայտ է, վոր այսուեղ լերեան և յեկել անդիմական գործադրությունը: Բամբակի համաշխառային սպառումը 1925—26 թվին կազմում էր նախապատերազմյանի 108,7 տոկոսը, 1926—27 թվին՝ 112,5 տոկոսը: Հացի համաշխառային ըերքը 1925 թվին հավասար էր նախապատերազմյանի 107,2 տոկոսին, 1926 թվին՝ 110,5 տոկոսին, 1927 թվին՝ 112,3 տոկոսին:

Համաշխառային արտադրության ընդհանուր ինդեքսը, անցնելով նախապատերազմյան մակարդակից, աչսպիսի դանդաղ ու մանր քայլերով և առաջ ընթանում:

Սակայն կան մի քանի կապիտալիստական լերկիրներ, վորոնք վոչ թե ընթանում են քայլ առ քայլ, այլ թոշում են դեպի առաջ՝ իրենց յետեւմ թողնելով նախապատերազմյան մասնակիր: Անպիսին են, որինակ, Հյուսիսային Սմերիկայի Միացյալ Նահանգներն ու մասսամբ Յալունիան: Ահա, Հյուս. Ամեր. Միաց. Նահանգների տվյալները. արդյունագործող արդյունաբերության աճումը 1925 թվին կազմում էր նախապատերազմյանի 148 տոկոսը, 1926 թվին՝ 152 տոկոսը. արդյունահանող արդյունաբերության աճումը 1925 թվին կազմում էր նախապատերազմյանի 143 տոկոսը, 1926 թվին՝ 154 տոկոսը:

Համաշխառային առեվտրի աճումը: Համաշխառային առեվտրն այնպիս արագ չի զարգանում, ինչպիս արտադրությունը: Սովորաբար նա արտադրությունից յետ և մնում, բայց և պայման մոտեցել է նախապատերազմյան նորմային: Արտաքին առարաջաշրջանառության ինդեքսն ամբողջ աշխարհում և կարեռ արդյունաբերությունը 1925 թվին կազմում է նախապատերազմյանի 98,1 տոկոսը, 1926 թվին՝ 97,1 տոկոսին: Իսկ առանձին

ինքիրներից Հյուս. Ամեր. Միաց. Նահանգներում 1925 թվին կազմել է նախապատերազմյանի 134,3 տոկոսը, 1926 թվին՝ 143 տոկոսը, Ֆրանսիայում՝ 98,2 տոկոսն ու 99,2 տոկոսը, Գիրմանիայում՝ 74,8 տոկոսն ու 73,6 տոկոսը, Յապոնիայում՝ 176,9 տոկոսն ու 170,1 տոկոսը:

Համաշխառային առեվտրն, ընդհանուր առմամբ, արգեն մոտեցել է նախապատերազմյան նորմային, իսկ մի քանի լերկիրներում, ինչպիս որինակ, Հյուսիսային Ամերիկայում ու Յապոնիայում, արգեն անցել է այդ նորման:

Ի վերջո՞ կան և լերորդ կարգի փաստեր, վորոնք խոսում են կապիտալիստական արդյունաբերության տեխնիկական առաջարդիմության և սացիոնալացման, արգյունաբերության նոր ձևեղծեր ստեղծելու և արեստների ու կարտելների, ուժեղացման մասին՝ համաշխառային մասշտարուկ առած: Կարծում եմ, վոր այս փաստերն ամենքին հայանի յեն, ուստի և լերկար կանգ չեմ առնում սրանց վրա, միայն կնկատեմ, վոր կապիտալն առաջադիմել և վոչ միայն արտադրանքի ու առերքի ուղղությամբ, այլ և արտադրության տեխնիկայի բարեկավման, տեխնիկական առաջադիմության և արտադրության սացիոնալացման բնակավառուներում, ընդ վորում այս բոլորը նպաստել և խոշորագույն տրամադրի համագա ուժեղացմանը և նոր ու հզոր մենահորհունակ կարտելների կազմակերպմանը:

Ահա փաստեր, ընկերներ, վորոնց հարկավոր և ի նկատի ունենալ և վորոնցից պետք և հետեւթյուններ հանել:

Միթե այս ամենը ապացնեց և, սակայն, թե սրանով կապիտալիզմի կայունացումն ավելի հաստատվել ու ամրապնդվել և ի հարկի վճ: Դեռ XIX համագումարի զեկուցման մեջ էր ասկում, վոր կապիտալիզմը կարող է հասնել նախապատերազմյան նորմաներին, կարող է անցել այդ նորմաները և սացիոնալացման յենթարկել իր արտադրությունը, սակայն այդ չի նշանակում, այս, ամենին ել չի նշանակում, թե կապիտալիզմի կայունացումը զրանով կամբապնդմի, թե կապիտալիզմը կարող է վերականգնել իր նախկին սմբռությունը: Ընդհակառակը՝ նեց այդ կայունացումից, նաև այն հանգամանքից, վոր արտադրությունն ու ասետուրն աճում են, վոր առերքիկական առաջադիմությունն ու արտադրական հարավորությունները բարզացնեամներն ու առտնձին իմպերիալիստական խմբավորումների

ազգեցության շրջանակներն առավել կամ պակաս չափով անփոփոխ են մնում — ահա, հենց այստեղից ել ծագում և համաշխարհային կապիտալիզմի ամենախոր ու ամենասուր ձգնաժամը, վորը հղի է նորանոր պատերազմներով և սպանական ամեն մի կայունացման գոյության համար:

Մասնակի կայունացումից բղիսում և կապիտալիզմի ձգնաժամի ուժեղացումը, հասունացող ձգնաժամը տապալում և կայունացումը: Արագես և կապիտալիզմի զարգացման դիալեկտիկան ներկա պատմական մոմենտում:

բ) Համաշխարհային կապիտալիզմի արտադրության ու առևտի այդ աճման մեջ ամենաբնորոշն այն փաստն է, վոր նըրանց զարգացումն անեամաշափ և ընթանում: Զարգացումն այնպիս չի կոտարվում, վոր կապիտալիստական լերկիրներն տուաշ շարժվեն մեկը մյուսի լեռներց, սահուն ու համաշափ, իրար չը խանդարեն, իրար շուռ չտան, այլ, ընդհակառակը, այնպիս և կատարվում, վոր նրանք իրար հրճում են, իրար դուրս զցում, մի քանիսն ընկնում են, մյուսներն առաջանում ու բարձրանում. կոնտինենտներն ու լերկիրները մահացու պայքար են մզում շուկաներում առաջնություն ձեռք բերելու համար: Տնտեսական կենտրոնը Յեղոպայից անցնում է Ամերիկա, Ասլանադան ովկիանոսից Մեծ ովկիանոսը: Հենց դրանով ել համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ Ամերիկայի ու Ասիայի տեսակարար կժուը բարձրանում և ի հաշիվ Յեղոպայից: Սհա մի քանի թվեր, յեթե համաշխարհային արտաքին տոկորի մեջ 1913 թվին Յեղոպայից բաժինը կազմում եր 58,5 տոկոս, Ամերիկայինը՝ 21,2 տոկոս, իսկ Ասիայինը՝ 12,3 տոկոս, ապա 1925 թվին Յեղոպայից բաժինն իջավ մինչև 50 տոկոսի, Ամերիկայինը՝ բարձրացավ մինչև 26,6 տոկոսի, իսկ Ասիայինը՝ մինչև 16 տոկոսի: Առաջ գաղող կապիտալիստական լերկիրների (Հյուս. Ամեր. Միացնահները և մասամբ Յապոնիան) կողքին ունենք և անտեսական անկման լերկիրներ (Անգլիա): Անող կապիտալիստական ֆերմանիայի ու վերջին տարիներու անուն հանած լերկիրների (Կանադա, Ավստրալիա, Արգենտինա, Չինաստան, Հնդկաստան) կողքին ունեն կայունացող կապիտալիզմի լերկիրներ (Ֆրանսիա ու Իտալիա): Անում և վաճառքի շուկայի պրեանդենտների քառակը, աճում են արտադրական հնարավորությունները, աճում և առաջարկը, իսկ շուկաների սահմանները և ազդեցության շրջանների տարածությունն առավել կամ նվազ չափով անփոփոխ են մնում:

Ահա այս և ժամանակակից կապիտալիզմի աճուն ու ներհակ հակասությունների հիմքը:

գ) Արտադրական հնարավորությունների աճման և շուկաների հարաբերական անփոփոխության միջև լեղած այս հակասությունը գարձել է հիմք այն յերկությի, վոր շուկաների պրորլեմը այժմ գարձել է կապիտալիզմի հիմնական պրորլեմը: Սրբել և վաճառքի շուկաների պրորլեմն ընդհանրապես, արտաքին շուկաներնը առանձնապես և կապիտալիզմի արտահանությանը մասնավորապես: Ահա այս և կապիտալիզմի ներկա վիճակը: Բակապես՝ սրանով ել բացատրվում է այն յերկույթը, վոր գործարանների ու Փարբիկանների վոչ-լրիկ բեռնավորումը սովորական յերկույթ և գառնում: Մտքային տրդելքների ուժեղացումը կրակի վրա յուղ և ածուկ միայն: Ներկա շուկաներն ու ազգեցության շրջանները ներ են գալիս կապիտալիզմին: Շուկաների պրորլեմը լուծելու խաղաղ փորձերն արդյունքներ չտվին ու չեն ել կարող տալ: Ինչպես հայտնի յե, բանկիրների, 1926 թվին արած, հայտնի գեկլարացիան՝ առեւրի ազատության մասին, սնանկ գուրս յեկավ: Մնանկ գուրս յեկավ նաև Ազգերի Լիգայի 1927 թվի անտեսական կոնֆերանսը, վոր ուզում եր կապիտալիստական յերկիրների «անտեսական շահերի միասնականություն» ստեղծելը: Շուկաների պրորլեմը լուծելու խաղաղ ձանագարնը կապիտալիզմի համար փակված է: Մնում և կապիտալիզմի համար մի միակ «լիլք»: Այդ՝ գաղութների ու ազգեցության շրջանների նոր սահմանագծումն է, վորը կարող և կատարվել միայն ուժի, ուղղմական ընդհարումների և նոր իմպերիալիստական պատեսագմների միջոցով:

Այսպիսով՝ կայունացումից կապիտալիզմի ձգնաժամի առումն և ծնկում:

## 2. ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՄԻՋԱՋԳԱՅԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՈՐ ԽՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԾՈՅՄԱՐ

### ՆՈՅԱԿԱՆ ՊԱՏԵՐԾՈՅՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ա) Ակտեղից ել հետեւում է, վոր աշխարհի վերաբաժանման ու արտաքին շուկաների հիմքը կազմող ազգեցության շրջանների խնդիրն այժմ համաշխարհային կապիտալիզմի քաղաքականության հիմնական հարցն է: Արդեն ասացի, վոր գաղութների ու ազգեցության շրջանների այժման բաժանմումը, վոր հաստատված է

վերջին իմպերիալիստական պատերտօնի հետևանքով, արդեն հը-  
նացել եւ նա այժմ արդեն չի բավարում վոչ Հյուսիսային Ամե-  
րիկային, վոր չբավականանալով Հարավային Ամերիկայով, ոշ-  
խատում եւ խորը թափանցել Ասիա (ամենից առաջ Չինաստան),  
վոչ Անգլիային, վորի ձեռքից դուրս են պրծնում գոմինիոններն  
ու Սրբելքի մի շարք կարեռագույն շուկաները, վոչ Յապոնիային,  
վորին Չինաստանում Անգլիան ու Ամերիկան «խանգարում են»  
սիալն, վոչ Խոտալիային ու Ֆրանսիային, վորոնք անթիվ վեճի  
առարկաներ ունեն Միջերկանուրան յերկրներում ու Միջերկրա-  
կան ծովում, վոչ ել, առավել ես, Գերմանիային, վորը գեռ զաղու-  
թագուրի և մնում: Այստեղից ել ծագում է շուկաների ու հում նյու-  
թերի աղբուրների նոր բաշխման «ընդհանուր» ձգտումը: Կարիք չկա  
ապացուցելու, վոր ասիական շուկաներն ու որանց ուղիները հան-  
դիսանում են կովի գլխավոր ասպարեզը: Այստեղից ել ծագում է  
հանգուցային պրոբլեմների մի ամրությարք, պրոբլեմներ, վորոնք  
նորանոր բաղխումների ամբողջական ոչախներ են: Այստեղից է  
ծագում նաև խաղաղսկիանոսյան պրոբլեմը (Ամերիկա-Յապո-  
նա, Անգլիական անտաղոնիզմը), վորը Ասիայում ու նրա ուղինե-  
րում առաջնություն ձեռք բերելու համար մզվող կովի աղբուրն  
է: Այստեղից է և Միջերկրական ծովի պրոբլեմը (Անգլո-Ֆրանս-  
Իտալական անտաղոնիզմը)՝ իրքի աղբուրը այն կովի, վոր մզում  
են Միջերկրական ծովի ափերին և զեզի Սրբելք առանց կար-  
ձագույն ձանապարհներին ափակեանելու համար: Այստեղից է և  
նավթի պրոբլեմի սրվելը (Անգլո-Ամերիկական անտաղոնիզմը). վո-  
րովհետեւ ասանց նավթի պատերազմի չի կարելի, իսկ ով առաջ-  
նությունի նավթային զործում, նու յել հաղթանակի շահներ  
ունի զալիք պատերազմում:

Վաղուց չե, վոր անգլիական մամուլում հրապարակվեց Չեմ-  
բերինի «Քերչին» ծրագիրը՝ Միջերկրական ծովի պրոբլեմի «կար-  
գավորման» համար: Յես չեմ կորազ յերաշխավորել այդ պլանի  
ստույդ լինելը: Բայց վոր Չեմբերինի ծրագրի հայտնվելը մա-  
մուլում հատկանշական ե, այս մասին կասկած չի կարող լինել: Այդ ծրագրի ելությունն այն ե, վոր նա Միջերից մանդատը Ֆը-  
րանսիայից առնում և հանձնում է Խոտալիայի ձեռքը: Տանժերը  
հանձնում է Ֆրանսիային՝ Սպանիայի ոպտին արած ֆինանսական  
կոմպենսացիայի վոխարեին, Կամերունը վարագարձնում է Գեր-  
մանիային և Խոտալիայի պարաւագործնում է գաղաքեցնել «խա-  
նակչությունը» (անբարարար) Բալկաններում և այն: Յեվ այս բա-

լորը կատարվում է Խորհուրդների զեմ կովելու գրոշի ներքո:  
Հայտնի յե, վոր այժմ, ընդհանրապես, վոչ մի ապականություն չի  
ձեռնարկվում՝ առանց Խորհուրդներին այդ կեզառոտ գործին խառ-  
նելու: Ատկայն վորն է այդ ծրագրի իսկական իթասարը: Այն, վոր  
ֆրանսիական բարժուազյան վանդվի Միջերայից: Է հնուց անտի  
Միջերան Սրբելքի գաներն և զեզի Միջագետք, Յեկիպասս և այլն:  
Միջերիցից կարելի յե վնասել Անգլիային՝ Սուեդի ջրանցքի ու Մի-  
ջագետքի ուայոններում Յեվ Չեմբերլենը ահա, ըստ յերեսվթին,  
ցանկանում է վերջ տալ այդ տհաճ գործին: Անկատկած, այդ ծրա-  
գրի հայտնվելը մամուլում պատահական չե: Այդ փաստի արժեքն  
այն ե, վոր նա առաջին, և պայծառ բնութագիր՝ այն կրծոտման,  
այն կոնֆլիկտները ու ուազմական բախումների, վորոնցով նդի յե  
այսպիս կոչված «մեծ պետությունների» ներկա հարաբերությունը:  
Ինչ վերաբերում է նավթի պրոբլեմի այժմյան վիճակին ու  
նրա շուրջը մզվող կավին, ապա այդ մասին բավական պերճա-  
խոսությամբ և արտահայտում հայտնի ամերիկան «Ուորլդ՝  
Ալորկ» թերթը իր հոկտեմբերյան համարում, ուր ասված ե.

«Գոյություն ունի մի իրական սպասնալիք, վոր ուղ-  
ղված է խաղաղության և անզլուսաքսոն ժողովուրդների իրար  
փոխադարձ հասկանալու զեմ... Մինասրության կողմից ա-  
մերիկան առևտրաբջունաբերական գործիններին պաշտ-  
պանություն ցուց տալն անխուսափելիորեն կուժեղանա այն  
շափով, վորքան վոր զբա կարիքը կմեծանա: Յեթե Բրիտա-  
նական կառավարությունն իրեն նույնացնի բրիտանական  
նավթին արդյունաբերության հետ, ապա, վաղ թե ուշ,  
ամերիկան կառավարությունն ել իրեն կնույնացնի ամերի-  
կան նավթային արդյունաբերության հետ: Կոփը չի կարող  
կառավարչական շրջանը մասնել առանց պատերազմի վանգը  
շափականց ուժեղացնելու»:

Անկատկած ե, կազմակերպվում են պետությունների նոր կոա-  
մինիաներ՝ արտաքին շուկաների, նույն նյութերի աղբյունների և  
սրանց ուղիների համար նոր պատերազմներ նախապատրաստելու  
նպատակով:

Ե) Արգուք, այս հաշվետվության շնոթակա ժամանակաշըր-  
ջանում, այդ հասունացող սպամական կոնֆլիկտները՝ «խաղաղ»  
ձանապարհով հարթելու վարձեր չեն յեղել: Այն, յեղել են:  
Ավելի յեն յեղել քան կարելի յեր սպասել Բայց նրանք վոչ  
մի արգունք չեն ավել: Դեռ ավելին: Այդ փորձերն սքողեցին

«պետությունների» նոր պատերազմներ նախապատրաստելու ջանքելը, մի սքորում, վորի նպառակը բանվորներին ու զյուղացիներին խարեւն եր:

Վեցնենք «հենց Ազգերի Լիգան», վորը, բուրժուական խարեւա մամուլի ու վոչ-պակաս խարեւա սոցիալ-դեմոկրատական մամուլի կարծիքն, խաղաղության մի զործիք և Խնչված վերջոցավ Ազգերի Լիգայի վայրախոռությունը խաղաղության, զինաթափման ու սպառազինության կրծառման ինդիքների մասին: Վոչ մի լայ բանով, բացի այն, վոր մասսաներին խարեցին, սպառազինման ձգությունը աշխատացան ու հոսունացող կոնֆլիկտները կրկին լարվեցին: Կարելի է, միթե, պատահականություն համարել այն չբեռութը, վոր, ահա թերեք տարի է, ինչ Ազգերի Լիգան բարբաջում և խաղաղության ու զինաթափման մասին, ահա լիքեք տարի է, ինչ այդ սուս բարբաջանքը պաշտպանվում և ապահս կոչված 2-րդ Ինտերնացիոնալի կողմից, իսկ «ազգերը» զինվում են հա զինվում, ընդարձակվում են «պետությունների» միջն շեղած հին կոնֆլիկտները, նորանոր կոնֆլիկտներ են կուտակվում, և այսպիսով խաղաղության գործը խափանվում է: Խնչի մասին և խոսում ծովալին սպառազինությունների կրծառման համար զումարված էռոպեական (Անգլիա, Ամերիկա, Յապոնիա) կոնֆերենսի տապալումը, լիթե վոչ այն մասին, վոր խաղաղութիւննույանց պրոբլեմը հանդիսանում և նոր իմպերիալիստական պատերազմների ապրուուր, վոր «պետությունները» վոչ զինաթափել են ցանկանում և վոչ ել սպառազինությունները կրծառել: Խնչ և արել Ազգերի Լիգան այդ վտանգը կանխիլու համար: Կամ, որինակի համար, վեցնենք հենց Խորհրդային պատգամագործություն թարմ լիւութը Ժնևում իրական (և վոչ գեկորատիվ) զինաթափմանց հարցի մասին: Խնչով բացատրել այն փաստը, վոր ընկեր Լուսնովի շիտակ ու աղնիվ գեկլարացիան՝ կատարելու զինաթափման մասին, կաթվածահար արեց Ազգերի Լիգալին և «լիակատար առակնկալ» հանդիսացավ նրա համար: Արդյոք այս փաստը մի վը կայություն չի այն մասին, վոր Ազգերի Լիգան վոչ թե խաղաղության ու զինաթափման գործիք է, այլ նոր սպառազինությունը ու նոր պատերազմներ նախապատրաստելու քողարկման գործիքը բոլոր թերկիրների Յապոնիալից մինչև Անգլիալից, Ֆրանսիալից մինչև Ամերիկալից, բուրժուական կաշառվող մամուլը ամբողջ կոկործով ճշում է, թե զինաթափման մասին արած խորհրդացին առջարկություններն «անկեղծ» չեն: Այդ գեղքում ինչու շտուռ-

ել խորհրդացին առաջարկությունների անկեղծությունը և իսկույն չգիմել գործնական զինութափմանը, կամ, գոնե, սպառազիւնումների լուրջ կրծառմանը: Կամ, որինակի համար, վերցնենք կապիտայիստական պետությունների «բարեկամական զաշնագրերի» ներկա սիստեմը՝ Ֆրանսիալից դաշնագիրը, Իտալիայի ու Ալբանիալից դաշնագիրը, Պիլսուզոկու կողմից նախապատրաստվող լեհ-լիտվական «բարեկամական զաշնագիրը», Լոկարնոյի սիստեմը, «Լոկարնոյի վոգին» և այլն: Սրանք ի՞նչիր են, յեթե վոչ նոր պատերազմների նախապատրաստություն, ուժերի նոր գասավորության մի սիստեմ՝ զալիք սաղմական բաղկումների համար: Կամ, իրու որինակ վեցնենք հետեւալ փաստերը. Ֆրանսիալից, Անգլիալից, Խորհրդական Ամեր. Միացյալ Նահանգների ու Յալոնիալից զորեւերի հանուն 1913 թվից մինչև 1927 թիվը 1,888 հազարից հասավ մինչև 2,262 հազարի: Նույն ժամանակամիջոցում միենույն յերկիրների ուազմական բյուջեն 2,345 միլիոն վոսկա սուրբուց հասել է 3,948 միլիոն ուուրլու. այդ հինգ լիքիրներում շարեւում գտնված սավառեակեների քանակը 1926 թվից մինչև 1927 թվիվը 2,655. ից հասել է 4,340-ի. այդ հինգ պետությունների կրեյսերեների տոննամեջ 1922 թվի 744 հազար տոննամեջ 1926 թվին հասել է 864 հազար տոննամ. ուազմաքիմիական զորեւի զրությունը պատկերացնում է հետեւալ հայտարարությունը, վոր արել և Հյուս. Ամեր. Միաց. Նահանգների ուազմաքիմիական զորեւի պետ զեներալ Ֆրենսիլ. «450 քիլոգրամ կշռող մի աերորիդական ուումբ, լցուիզիտով լցված, կարող է անբնակ դարձնել նյու-Յորքի տասը թաղը, իսկ լիթե 50 սավառնակ 100 տոնն լցուիզիտ նետեն նյու-Յորքի վրա, ապա այդ ամբողջ քաղաքն անմարդաբնակ կդարձնեն, զոնե մի շարթով»: Խնչ են ասում այս փաստերը, լիթե վոչ այն, վոր նոր պատերազմների նախապատրաստությունը ծավալվում է իր ամրող թափով:

Ահա, այս են հետեւանքները «խաղաղաբականության» ու «զինաթափման» քաղաքականության ըուրժուական պետությունների ընդհանրապես, Ազգերի Լիգալինը առանձնապես և սոցիալ-գենոկրատական, կապիտալիստ քծնող, սպառազորությանը մասնավորապես:

Առաջ սպառազինման աճումն արգարացնում է յին Գերմանիայի վատիք մինչև գլուխ զինվոծ լինելու հանգամանքով: Այժմ այդ «արգարացումը» կորցրել է իր ուժը: Միթե պարզ չեն, վոր պետությունների միջև ծագելիք իմպերիալիստական նոր պատե-

բազմների անխուսափելիութիւնն և թելապրում սպառապինման այդ գարգացումը պարզ չե, վոր «պատերազմի վագին» հանդիպանում և «Լոկալնոյի վոգու» հիմնական բովանդակութիւննը:

Կարծում եմ, վոր ներկա «խոպաղ հարաբերությունները» կարելի յե նմանեցնել մի հին, մաշված շապկի, վորը կազմված ե իրար հետ բարակ թելով կապված կարկատաճներից, չենց վոր մի քիչ տժով թափ տաս այդ թելը, կամ վորեն տեղից կարես այն, և ամրազ շապիկը կրանդի, և կման մրախ կարկատաճները: Յեթե վորեն տեղ՝ Ալբանիայում, կամ Լիտվայում, Զինաստանում, կամ Հյուսիսային Արքիկալում, ցնցին ներկա «խոպաղարակ հարաբերությունները», այդ «հարաբերությունների շնորը» խոփուն փուլ կգա: Այսպիսի իրերի վիճակը վերջին իմպերիալիստական պատերազմից առաջ, չեր Արաւանում կատարված սպառաթյունը պատերազմի հանգագ: Այսպիսի գրությունը և այժմ:

Կայունացումից իմպերիալիստական նոր պատերազմների անխուսափելիութիւնն և ձնվում:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՈՅԵԿՆ ՀԵՎԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԴՐՈՒՅՑՈՒՄՆԵՐ ՅԵՎ ՆՈՐ ՀԵՎԱՓՈԽԱԿԱՆ ՎԵՐԵԼՎՔ ՀԱՅԱՅԱՓՈԽԾՐՄՆԵՐԸ

ա) Պատերազմելու համար բավական չեն սպառապինութիւնի աճումն ու նոր կոպիցիաներ կազմակերպելու: Հարկավոր և նաև թիկունքի ամրացումը՝ կապիտալիստական լերկիրներում: Վհչ մի կապիտալիստական լերկիր չի կարող լուրջ պատերազմել՝ տունց նախորդ իր մեփական թիկունքն ամրացնելու, առանց «իր» բանվորներին ու «իր» գտղութները ստանձնարելու: Այսուղից ել ծագում և բուրժուական կառավարությունների քաղաքականության աստիճանական փաշխատացումը: Չի կարելի պատահական համարել այն փաստը, վոր այժմ Ֆրանսիական իշխում և աջ բլոկ, Անգլիայում Հիֆախ-Դեսերգինսկի-Ռոբրաքտի բլոկը, Գերմանիայում բուրժուական բլոկը, Յապոնիայում սազմական կուսակցությունը, իտալիայում ու Լիհաստանում՝ Փաշխատական կառավարությունները:

Ազատեղից ել ծագում են՝ ձնշումը բանվոր զասակարգի վրա, արժմիությունների որենքն Անգլիակում, «ազգը զինելու որենրը» ֆրանսիայում, 8 ժամյա բանվորական որվա լիկվիդացիան մի շաբթյուրիներում և բուրժուազիայի հարձակումը պրոլետարիատի վրա ամենուրեք:

Ազատեղից են ծագում՝ ուժեղացրած ձնշումը գաղութների ու լենթական լերկիրների վրա և իմպերիալիստական զորքերի կազմի ուժեղացումն այդ լերկիրներում, զորքերի, վորոնց քանակը միլիոնների յե համար, ընդ վորում 700 հազարից ավելին զետեղված և Բրիտանական «արբարետություններում» ու «ազգեցության շրջաններում»:

բ) Հասկանալի յե, վոր Փաշխատական կառավարություններից այդ պազմանային ձնշումը չեր կարող տանց պատասխան-շարժման մնալ ձնշված ժողովուրդների կողմից գաղութներում և բանվոր զասակարգի կողմից մայր լերկիրներում: Այսպիսի փաստ, ինչպիսին են հեղափոխական շարժման աճումը Զինաստանում, Խոզոննեղիստում, Հնդկաստանում և այլն, չի կարող վճռական նշանակության չափնենալ համաշխարհային իմպերիալիզմի բախտի նկատմամբ: Խնդները գատեցենք: Ամբողջ աշխարհի 1,905 միլիոն ազգարնակությունից 1,134 միլիոն ազգում են գաղութներում ու կիսագաղութներում, 143 միլիոնը ԽՍՀ Միության սահմաններում, 264 միլիոնը միջնորդական լերկիրներում և միայն 363 միլիոնը գաղութներն ու կիսագաղութները ձնշող խոշոր կապիտալիստական լերկիրներում: Պարզ ե, վոր գաղութային լերկիրների հեղափոխական արթնացումը նախագուշակում և համաշխարհային կապիտալիզմի անկումը: Այս փաստը, վոր շինական հեղափոխությունը գեռ ուղղակի չի հաղթել իմպերիալիզմին, չի կարող վճռական նշանակություն ունենալ հեղափոխության հեռանկարների տեսակետից: Փողովրդական մեծ հեղափոխությունները, իրենց լեռութիւ առաջին խաղի ժամանակ, լերենք վերջնական հաղթանակ չեն տանում: Երանք աճում ու ամրանում են մակընթացության ու տեղավարության կարգով: Այսպիս և յեղել ամենուրեք, ի թիվս վորոնց և Բուստանում: Այսպիս կլինի և Զինաստանում: Զինական հեղափոխության ամենակարեւը արդյունքն այն ե, վոր նա գարավոր քնից արթնացրեց և շարժման բուրժուազիուրդ միլիոններով ձնշվածներ և հարստանարվածներ, վերջնականապես պարզեց հականեղափոխական գեներալների կիբեռ գեմքը, զիմակաղերծ արեց հականեղափոխական գոմինդանական սպասավորներին, ժողովրդական ստորին խավերի միջ ամրացրեց կոմիտենիստական կուսակցության հեղինակությունը, շարժմանը՝ ամբազությամբ վերցրած՝ բարձրացրեց իր բարձրագույն աստիճանին՝ Խորհուրդներ կազմակերպելու աստիճանին, և նորանոր հույսեր արթնացրեց ձնշված զասակարգերի միլիոնավոր

մասսաների մեջ Հնդկաստանում, Խնդրնեղիայում և այլն։ Միայն կուրերն ու փոքրողիներն են կասկածում այն մասին, վոր չի հական բանվորներն ու գյուղացիները գնում են զեպի հեղափոխության նոր վերելք։

Իսկ ինչ վերաբերում ն Յեվրոպայի բանվոր դասակարգի հեղափոխական շարժմանը, ապա այստեղ, այս ասպարիզում ել ակներև են բանվորական ստորին խավերի ձախացման ու հեղափոխական աշխուժացման պարզ նշանները։ Այնպիսի փաստեր, ինչպիսին են անզինական ընդհանուր ու ածխահատների գործադրությը, բանվորների հեղափոխական յելույթը վիճանայում, Սակերի ու Վանցետատիի սպանության հետեանքով առաջացած հեղափոխական ցուցերը Թրանսիայում ու Գերմանիայում, գերմանական ու լիհական կոմկուսակցությունների ընտրական հաջողությունները, բանվորական պարզ շերտավորումն Անդլիայում, վորի շնորհիվ բանվորները դեպի ձախ, իսկ նրանց զեկավարները դեպի աջ՝ զեպի ակնհայտնի սոցիալմաքերիալիզմի ծոցն են զընում, և Ինտերնացիոնալի ազգասերումն ու իմպերիալիստական Ազգերի Լիգայի ուղղակի պոչը դառնալը, սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների հեղինակության անկումը բանվոր դասկարգի լայն խավերում, Կոմինտերնի ու նրա սեկցիաների ազգեցության աճումն ամենուրեք՝ բոլոր յերկիրների պրոլետարների շարքերում, ԽՍՀ Միության հեղինակության աճումն ամբողջ աշխարհի ճշգած դասակարգերի մեջ, «ԽՍՀ Միության բարեկամների կոնգրեսը» և այլն,—այս բոլորն աներկրայորեն վկայում են, վոր Յեվրոպան մտնում է հեղափոխական վերելքի մի նոր շրջանի մեջ։ Յեթե մի այնպիսի փաստ, ինչպիսին և Սակերի ու Վանցետատիի սպանությունը, կարող ե բանվոր դասակարգի ցուցերի պատճառ դառնալ, ապա այդ անտարակույս վկայում ե, վոր բանվոր դասակարգի ծոցում հեղափոխական եներգիա յե կուտակիլ, վորն առիթ ու զեպիած ե վորոնում, յերբեմն ըստ յերեվութին ամենանշան զեպիած, վոր դուրս ժայթքի ու թափի կապիտալիստական ռեժիմի զիիին։

Մենք, թե գաղութներում և թե մալր յերկիրներում, ապրում ենք հեղափոխական վերելքի նախորեկին։

Այն, կայունացումից նոր հեղափոխական վերելք և ծագում։

#### 4. ԱՍՊԻՏՈԼԻՍՏԵԿՈՎ ԱՇԽԱՐԴՅԱՆ ՈՒ ԽՍՀ ՄԻԱԽԹՑՈՒՆԸ

ա) Այսպիսով՝ մեր առաջ են համաշխարհային կապիտալիզմի խորագույն ճգնաժամի ծագալուն անկախության ըոլոր նըշանները։ Յեթե 1920-21 թվականների հետպատերազմյան ժամանակավոր ճգնաժամը՝ ներքին քառու ու կապիտալիստական վերելներից զուրու գոնված կապերի քայլալման հետ միասին՝ կարելի է անցած համարել, վորի հետևանքով ել սկսվել ե մասնավոր կայունացման ժամանակաշրջանը, ապա՝ կապիտալիզմի հիմնական ճգնաժամը, վոր նշվում է իրեկ հետեանք Հոկտեմբերյան հեղափոխության հազթանակի ու ԽՍՀ Միության համաշխարհային կապիտալիստական սիստեմից անջատվելու, վոչ միայն չի անցել, այս ընդհակառակը, ավելի ու ավելի յե խորանում խախտելով համաշխարհային կապիտալիզմի գոյության բռն հիմունքները։ Կայունացումը վոչ միայն չխանգարեց այդ հիմնական ճգնաժամի զարգացմանը, այլ ընդհակառակը, նրա հետագա ծագալմանը հող ու ազբյուր մատակարարեց։ Աճուն կորվը շուկաների համար, աշխարհի ու ազգեցության շրջանների նոր վերաբաժնման անհրաժեշտությունը, բուրժուական պացիֆիզմի ու Ազգերի Լիգայի խորտակումը, նոր կոալիցիաներ ստեղծելու տեսդադարին աշխատանքը և ուժերի նոր դասավորությունը՝ նոր պատերազմներ սպասելու պատճառով, սպառազինման կատաղի աճումը, գագանային ճնշումը բանվոր դասակարգի ու գաղութավին յերկիրների վրա, հեղափոխական շարժման աճումը զարդութներում և Յեվրոպայում, Կոմինտերնի հեղինակության աճումն ամբողջ աշխարհում, ի վերջո՞ Խորհրդային Միության հզորության ամրացումը և նրա հեղինակության ուժեղացումը Յեվրոպայի բանվոր դասակարգի ու գաղութների աշխատավոր մասնակիր շրջանում,—այս, այս բոլորն այնպիսի փաստեր են, վորոնք համար զարգություն հաջափոխական եներգիա յե կուտակիլ, վորն առիթ ու զեպիած ե վորոնում, յերբեմն ըստ յերեվութին ամենանշան զեպիած, վոր դուրս ժայթքի ու թափի կապիտալիստական ռեժիմի զիիին։

Քանի գեում, կապիտալիզմի կայունացումն այնքան ավելի ու ավելի փուլմ է ու անհասան գառնում։

Յեթե յերկու տարի առաջ կարելի ու հարկավոր եր խոսել հեղափոխության ալիքների տեղատվության մասին Յեվրոպայում, ապա՝ այժմ բոլոր հիմքերն ունենք պնդելու, վոր Յեվրոպան պարզուեն մենում և մի նոր հեղափոխական վերելքի օրջան, ել չեմ խոսում գաղութավին յերկիրների մասին, ուր իմպերիալիստների վիճակն ավելի ու ավելի կատարողակի և դասնում։

բ) Խորտակվեցին կապիտալիստների բոլոր հույսերը՝ ԽՍՀ Միությունը ձևանառուն գարձնելու, նրա կապիտալիստական վերտակման, Յեկրոպափ բանվորների ու գաղութների աշխատավորական ձևանառների առաջ նրա հեղինակության անկման մասին: ԽՍՀ Միությունն աճում ու զարգանում է հատկապես իրեն կառուցվող սոցիալիզմ յերկիր: Նրա պայմանագրությունն աճում ու ամրանում է ամրող աշխարհի բանվորների ու զբովացիների մեջ: ԽՍՀ Միության՝ իրեն կառուցվող սոցիալիզմի յերկրից գոյությունն ինքնին հանդիսանում է համաշխարհային իմպերիալիզմի քայլացման և, թե Յեկրոպայում և թե գաղութներում, նրա կալունության խորտակման մեծագույն փաստերից մեկը: ԽՍՀ Միությունը պարզորեն գանում է Յեկրոպայի բանվոր դասկարգի ու գաղութների ճնշված ժողովուրդների դրոշը, ուստի կապիտալիզմը, վորպեսզի ապագա իմպերիալիստական պատերազմների համար հոգ պատրաստի, վորպեսզի, կապիտալիստական թիկունքն ամրացնելու նպատակով, «իր» բանվոր դասակարգին հիմնականորեն հույզ տա և սահմանարի «իր» գաղութները, — ամենից առաջ պիտի սահմանարի ԽՍՀ Միությունը, հեղափոխության այդ սճախն ու տնկարտնը, վորը, միենույն ժամանակի, կապիտալիստական յերկիրների տոհարի համար մեծագույն շուկաներից մեկն ե: Ահա այստեղից ել տաճանում են՝ ինտերվենցիոն տեղադրությունը իմպերիալիստների մեջ, ԽՍՀ Միությունը մեկուսացնելու քաղաքականությունը, ԽՍՀ Միությունը շրջապատելու քաղաքականությունը և ԽՍՀ Միության հետ պատերազմելու պայմանները:

Եներվեցիոն ենեղեցերի ուժեղացումն իմպերիալիստների բանակում յեվ պատերազմի սպառնալիքը (ԽՍՀ Միության նկատմամբ) եներկա կացության հիմնական փաստերից են:

Անգլիական բուրժուազիան, կապիտալիզմի զարգացող ալգոնաժամի պայմաններում, ամենից շատ սպառնանքի յենթակա և ամենից շատ տուժող կողմն ե: Նա յե իր վրա վերցրել ինտերվենցիոն տենդենցիների ուժեղացման գործի նախաձեռնությունը: Պարզ ե, վոր խորհրդային բանվորների կողմից անգլիական բանվորներին հասցրած սժանողակությունը և ԽՍՀ Միության բանվոր գաղակարգի համակրությունը չինչական շարժման նըլկատմամբ չելին կարող կրակի վրա յուղ չածել: Այս բոլոր հանգամանքներով են պայմանագրության մեջ: Ամբողջի հետ ունեցած հարաբերությունների բարեկավականությունը և ԽՍՀ Միության հետ պատերազմի սպառնալիքը առաջանաւ:

Հարաբերությունների խզումը և մի շաբթ յերկիրների ու ԽՍՀ Միության հարաբերությունների վատանալը:

գ) Կապիտալիստական աշխարհի ու ԽՍՀ Միության հարաբերությունների միջն յեղած յերկու տենդենցիների՝ ռազմական հարձակման (ամենից առաջ Անգլիան) ու խաղաղ հարաբերությունների (մի շաբթ ուրիշ կապիտալիստական յերկիրներ) տենդենցիների: Կարվը ներկայումս, այդ պատճառով, հանդիսանում է մեր արտաքին հարաբերությունների սիստեմի հիմնական փաստը:

Հաշվետվության յենթակա ժամանակաշրջանի խաղաղ հարաբերությունների տենդենցը նշող փաստերը հետեւալներն են՝ Թուրքիայի հետ, իրար վրա չարձակվելու համար կապած դաշնագիրը, յերաշխավորության պայմանագիրը՝ Գերմանիայի հետ, Հունաստանի հետ կապած մաքսային համաձայնությունը, Գրեմանիայի հետ, Կապած պայմանագիրը՝ Վերուգվայի կողմից, յերաշխավորության պայմանագիրը՝ Ավգանիստանի հետ, յերաշխավորության պայմանագիրը՝ Լիտվայի հետ, Լատվիայի հետ կապած յերաշխավորության պայմանագրի վրոշմակնքումը, Թուրքիայի հետ կապած առևտրական պայմանագիրը, Շվեյցարիայի հետ ունեցած կողմից, Եվրոպայի հետ ունեցած կողմից, Համական կան կապերի առումը:

Հաշվետվության յենթակա ժամանակաշրջանի ռազմահարձակման տենդենցիները նշող փաստերն են՝ տնկիական հայտագիրը (նոտա) գործադուլավոր ածխահատներին գրամական ուժանդակություն հասցնելու առիթով, հարձակումը՝ Պեկինում, Տյանցզանում և Շանհայում, հարձակումն Արկանի վրա, Ս. Խ. Հ. Միության հետ ունենած հարաբերությունների խզումն Անգլիայի կողմից, Վոյկովի սպառնությունը, անգլիական վարձկանների կատարած ահաբեկման գործությունները Ս. Խ. Հ. Միության մեջ, Ֆրանսիայի հետ ունեցած հարաբերությունների սրգելը՝ Խակովսկուն յետ կանչելու հարցի առիթիվ:

Յեթե յերկու տարի առաջ կարելի ու հարկավոր եր խոսի վորոշ հավասարակառության ժամանակաշրջանի և Ս. Խ. Հ. Միության ու կապիտալիստական յերկիրների «խաղաղ համակեցության» մասին, ապա՝ այժմ բոլոր հիմքերն ունենք պնդելու, վոր «խաղաղ համակեցության» ժամանակաշրջանը անցյալին ե



պատկանում, վոր նա իր տեղը զիջել ե իմպերիալիստական հարձակումներին ու Ս. Խ. Հ. Միության դեմ կազմակերպվող ինտերվենցիալի նախապատրաստությանը: Ս. Խ. Հ. Միության դեմ միասնական ճակատ ստեղծելու շանքերն՝ Անգլիայի կողմից դեռ հաջողություն չեն գտել: Այդ անհաջողության պատճառներն են՝ շահերի հակամարտությունն իմպերիալիստների բանակում, միքանի յերկիրների՝ Ս. Խ. Հ. Միության հետ անտևառական կապեր ունենալու հարցում, շահագրգուփած լինելը, Ս. Խ. Հ. Միության խաղաղ քաղաքականությունը, Յելվոռպայի բանգոր, դաստիարգի հականերգործությունը և իմպերիալիստների վախճ այս մասին, վոր, Ս. Խ. Հ. Միության հետ ունեցած պատերազմի դեղքում, իրենց տասը հեղափոխություն կրոնկվի: Բայց այդ չի նշանակում, թե Անգլիան Ս. Խ. Հ. Միության դեմ միասնական ճակատ կազմակերպելու աշխատանքը մի կողմ կնետի, թե նրան ալգախի ճակատ կազմակերպելը չի հաջողվի: Զնայած Անգլիայի ժամանակավոր անհաջողություններին՝ պատերազմի սպառնալիքը մնում է ուժի մեջ:

Այսահերից ել անհրաժեշտորեն պիտի յեզրակացնել, վոր հարկացոր ե հաշվի առնել իմպերիալիստների բանակում ամիրող հակասությունները, ուշացնել պատերազմը և ամեն միջոց ձեռք առնել՝ խաղաղ հարաբերություններ պահպանելու համար: Մենք չենք կարող մոռանալ կենինի խոսքերն այս մասին, թե մեր շինարարության գործում շատ բան կախված է այս հանգամանքից, թե արդյոք մեզ հետաշողվի՝ ուշացնել կապիտալիստական աշխարհի հետ ունենալիք պատերազմը, վորն անխուսափելի յե, բայց վորը կարելի է հետաձգել կամ ձգձգել մինչեւ այն մոմենտը, յերբ պրոլետարական հեղափոխությունը կհասունանա Յելվոռպայում, կամ մինչեւ այս մոմենտը, յերբ կատարելապես կհասունանան գաղութային հեղափոխությունները, կամ, վերջապես մինչեւ այն մոմենտը, յերբ կապիտալիստներն իրար հետ կկալեն՝ գաղութները բաժանելու համար: Այս պատճառով ել՝ կապիտալիստական չերկերների հետ խաղաղ հարաբերություններ պահպանելը մեզ համար պարտադիր ինդիր են:

Կապիտալիստական յերկիրների հետ մեր ունեցած հարաբերությունների հիմքը յերկու հակագիր սիստեմների միատեղ գոյության փաստի ճանաչումն է: Փորձն ըստ ամենայնի արդարացրեց այդ: Յերբեմն գալիքակության քար և հանդիսանում պարտքերի ու վարեկերի խնդիրը: Մեր քաղաքականությունն

այստեղ պարզ է: Նա հիմնված է «տալիս ես, կտամ» ֆորմուլայի վրա: Մեր արզունաբերության բեղմնավորման համար վարկ կտաս, ապա կստանաս նախապատերազման պարտքերի վորոշագինը, վորը մենք մեր ստացած վարկերի հավելվալ տոկոսն ենք համարում: Չես տա, չես ել ստանա: Փաստերն ասում են, վոր մենք, արզունաբերական վարկեր ստանալու հարցում, վորոշ հաջողություններ ունենք: Այս ասելով՝ ի նկատի ունեմ վոչ միայն Գերմանիան, այլ և Ամերիկան ու Անգլիան: Վարդակ է գաղտնիքը: Այնտեղ, վոր մեր յերկիրը սեծագույն շուկան և սարքավորում ներմուծելու համար, իսկ կապիտալիստական չերկերները հենց այդ ապրանքի վաճառման կառիքն են զգում:

### 5. ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս բոլորն ամփոփելով ստանում ենք.

**Առաջին.** — Կապիտալիստական շրջապատի ներսը գտնված հակամարտությունների աճումը. կապիտալիզմի համար աշխարհի նոր վերաբաժնման անհրաժեշտությունը՝ պատերազմի միջոցով՝ ինտերվենցիոն տենդենցիներ կապիտալիստական աշխարհի մի մասի մեջ՝ զիսավորությամբ Անգլիայի. կապիտալիստական աշխարհի մլուս մասի ցանկությունը՝ չխառնվել Ս. Խ. Հ. Միության դեմ ուղղված պատերազմին՝ վերադասելով նրա հետ տնտեսական կապեր հաստատելը. այդ յերկու տենդենցիների միջև մզգող պայքարի գոյությունը և, խաղաղությունը պաշտպանելու նպատակով, այդ հակամարտությունը հաշվի առնելու հնարավորություններ՝ Ս. Խ. Հ. Միության համար:

**Երեկորդ.** — Կործանակող կայունացում, գաղութային հեղափոխական շարժման աճում, նոր հեղափոխական վերելքի նախանձաններ Յելվոռպայում, Կոմիսատերնի ու նրա սեկցիաների հեղինակության աճումն աճբողջ աշխարհում, Յելվոռպայի բանգոր գասակարգի պարզ համակրությունը՝ Ս. Խ. Հ. Միության նկատմամբ, Ս. Խ. Հ. Միության աճող գորությունը յերկրի ներսում՝ մեր յերկրի բանգոր դասակարգի հեղինակության աճումն աճբողջ աշխարհի ճնշված դասակարգերի մեջ:

Այսահերից հետեւալ խնդիրներն են բզիսում կուսակցության համար.

1 Միջազգային հեղափոխական շարժման գծով.

ա) Պայքար ամբողջ աշխարհում՝ կոմմունիստական կուսակցության զարգացման համար,

բ) Պատքար հեղափոխական արհմիությունների ամրացմանը ու կապիտալի հարձակման դեմ բանվորների միասնական հակառ կազմելու համար,

գ) Պատքար Ս. Խ. Հ. Միության ու կապիտալիստական յերկիրների բանվոր դասակարգերի բարեկամությունն ամրացնելու համար, և

դ) Պատքար Ս. Խ. Հ. Միության բանվոր դասակարգերի ու գաղութային յերկիրների ազատազրական շարժան կապն ուժից դաշնելու համար:

2. Ս. Խ. Հ. Միության արտաքին քաղաքականության գծով.

ա) Պատքար իմպերիալիստական նոր պատերազմների նախապատրաստության դեմ,

բ) Պատքար Անգլիայի ինտերվենցիոն տեսդենցների դեմ ու Ս. Խ. Հ. Միության պաշտպանուսակության ուժեղացում,

գ) Խաղաղության ու կապիտալիստական յերկիրների հետ ունենալիք խաղաք հարաբերության պաշտպանության քաղաքականություն,

դ) Մեր ապրանքաշրջանառության ընդարձակումն արտաքին առևտորի մենաշնորհի հիմունքների ամրացմանը, և

է) Մերձեցումն ամսական կոչված «թուլ» ու «վոչ-լիաֆրա-վատեր» պետությունների հետ, վորոնք յենթակա յեն իշխող իմպերիալիստական պետությունների ճնշումին ու շահագործմանը:

## II

### ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՍԻՆ ՄԻՌԻԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԸ

Բնկերներ, թուլ տվեք անցնել մեր յերկրի ներքին գրությանը, մեր սոցիալիստական շինարարության հաջողությանը, պրոլետարիատի զիկտատուրայի վիճակի, նրա զարգացման ու ամրապնդման հարցին:

Մեր կուսակցության XIX համագումարը կենտրոնական կումբեյին հանձնարարեց մեր ժողովրդական անտեսության գործի զարգացումն առաջ տանել հետեյալ հիմնական խնդիրների անլյան տակ: Նախ վոր մեր քաղաքականությունը նպաստի բոլովական անտեսության աճմանը, յերկրորդ վոր

կուսակցության քաղաքականությունն ոժանդակի ինդուստրիալի գարգացման թափի արագությանը և ժողովրդական ամրող տընտեսության մեջ ապահովի ինդուստրիալ զեկավար դերը. յերրորդ՝ վոր ժողովրդական տնտեսության զարգացման ընթացքի մեջ ապահովի ժողովրդական տնտեսության սոցիալիստական սեկտորի, անտեսության սոցիալիստական ձերի ավելի աճող ահապարար կշիռը ի հաշիվ մասնավոր ապրանքատիրության ու կապիտալիստական սեկտորի. չորրորդ՝ վոր մեր բովանդակ անտեսության զարգացումը՝ ինդուստրիալի նոր ձյուղերի կազմակերպությունը, հում նյութերի վորոշ ձյուղերի կազմակերպությունը և այն, այն ուղղությամբ տարվի, վոր նրա ընդհանուր զարգացումը ապահովի մեր յերկրի անտեսական անկախությունը, վար մեր յերկրը համաշխարհային տընտեսության կապիտալիստական սիստեմի հավելված չգունա հինգերորդ՝ վոր պրոլետարիատի զիկտատուրան, բանվոր գասակարգի ու գուղղացիական մասաների ըլոկը ու բանվոր գասակարգի զեկավարությունն այդ ըլոկում ամրապնդվեն, և վեցերորդ՝ վոր բանվոր դասակարգի ու գուղղացիական չքավոր խավերի նյութական ու կուլտուրական վիճակի անսալթաք բարձրանաւ:

Հաշվետվության յենթակա շրջանում մեր կուսակցությունն ու նրա կենտրոնական կոմիտեն ինչ են արել այս խնդիրների իրագործման համար:

### I. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԵՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՄԲՈՅՉԱԳԱՎԱՐԸ Ա. Ա. Ա. Ա.

Առաջին հարցը ժողովրդական բովանդակ անտեսության զարգացումն եւ Արտեզ, հաշվետվության յենթակա շրջանի համար, մի քանի հիմնական թվեր եմ բերում, վորոնք վերաբերում են ժողովրդական անտեսության զարգացման հարցին ընդհանուրակեն և արդյունաբերությանն ու գյուղատնտեսությանը մասնավորակեն: Այս թվերը յես վերցնում եմ Պետպանի հայտնի հաշիվներից: Ի նկատի ունեմ Պետպանի 1927—28 թվականի մերստուգիչ թվերը և հնդամքա պլանի սեագիր նշումները:

ա) ժողովրդական բովանդակ անտեսության արտադրության աճումը՝ յերկու տարվա ընթացքում: Յեթե 1924—25 թվի պարզաբնական տնտեսության ընդհանուր արտադրանքն, ըստ Պետպանի

նոր հաշիվների, կտղմում և նախապատճերազմանի 87,3 տոկոսը, իսկ ամրող արդյունաբերության արտադրանքը՝ 63,7 տոկոսը, ապա այժմ, յերկու տարուց հետո, 1926—27 թվին զբուղատնտեսության արտադրանքն արգեն կազմում է նախապատճերազմանի 108,3 տոկոսը, իսկ արդյունաբերության արտադրանքը՝ 100,9 տոկոսը: 1927—28 թվի համար, ըստ Պետլանի վերտուութիչ թվերի, յենթագրվում է, վոր զյուղատնտեսության արտադրանքի հետագա զարգացումը հասնելու յե մինչև նախապատճերազմանի 111,8 տոկոսին, իսկ արդյունաբերությունը՝ մինչև 114,4 տոկոսին:

Առետրամիջնորդական շրջանառության աճումը յերկում՝ յերկու տարվա ընթացքում: Յեթե շրջանառության չափը 1924—25 թվի համար 100 ընդունենք (14,613 միլ. չերվ. ոուրլի), ապա՝ 1926—27 թվին մենք 97 տոկոս (28,775 միլ. ոուրլի) ավելացում կունենանք, իսկ 1927—28 թվի համար մինչև 116 տոկոս (33,440 միլ. ոուրլի) աճում է յենթագրվում:

Մեր վարկային սիստեմի զարգացումը՝ յերկու տարվա ընթացքում: Յեթե մեր բոլոր վարկային հասաստությունների միացյալ բարանսն առ մեկն հոկտեմբերի 1925 թվի ընդունենք 100 (5,343 միլ. չերվ. ոուրլի), ապա՝ առ մեկն հունիսի 1927 թվի կունենանք 53 տոկոս աճում (8,175 միլ. ոուրլի): Անկուսկած է, վոր 1927—28 թվին մեր ազգանացրած վարկային սիստեմն ավելի և աճելու լի:

Յերկաթուղարին տրանսպորտի զարգացումը՝ յերկու տարվա ընթացքում: Յեթե 1924—25 թվին մեր ամրող յերկաթուղարին ցանցի ընդունատարության շրջանառությունը հասնում էր նախապատճերազմանի 63,1 տոկոսին, այժմ, 1926—27 թվին, նա կազմում է նախապատճերազմանի 99,1 տոկոսը, իսկ 1927—28 թվին կհասնի 111,6 տոկոսին: Ել չեմ խոսում այն մտսին, վոր մեր յերկաթուղարին ցանցը 74,4 հազար քիլոմետրից հասել է 76,2 հազար քիլոմետրի: Նախապատճերազման դրության հետ համեմատած՝ ստացվում է 30,3 տոկոս ավելացում, 1917 թվի հետ համեմատած՝ 8,9 տոկոս:

Պետական բյուջեի աճումը՝ յերկու տարվա ընթացքում: Յեթե միացյալ բյուջեն (պետական միասնական բյուջեին դումարած տեղական բյուջեները) 1925—26 թվին կազմում էր նախապատճերազմանի (5,024 միլ. ոուրլի) 72,4 տոկոսը, ապա՝ ներկա ըոսպելին, այսինքն՝ 1927—28 թվի միացյալ բյուջեն ավելի

կազմի նախապատճերազմանի 110—112 տոկոսը (ավելի քան 7 մելլարդ ոուրլի): Յերկու տարվա ընթացքում աճել է 41,5 տոկոս:

Արտաքին առեարի աճումը՝ յերկու տարվա ընթացքում: Յեթե 1924—25 թվին արտաքին առեարի ընդհանուր շրջանառությունը կազմում էր 1,282 միլիոն ոուրլի, այսինքն՝ նախապատճերազմանի մոտ 27 տոկոսը, ապա՝ այժմ, 1926—27 թվին, մենք 1,483 միլ. ոուրլի շրջանառություն ունենք, այսինքն՝ նա հասնում է նախապատճերազմանի 35,6 տոկոսին, իսկ 1927—28 թվին յենթագրվում է հասցեն 1,626 միլ. ոուրլու, այսինքն՝ նախապատճերազմանի 37,9 տոկոսն: Արտաքին առեարի զարգացման թափի գանգապության պատճաներն են նաև՝ այն փաստը, վոր բուրժուական պետությունները հաճախ արգելքներ են հարուցանում մեր արտաքին առեարի գեմ, արգելքներ, վորոնք յերրեմն գանում են քողարկված բլուգադա. յերկորդ՝ այն փաստը, վոր մենք չենք կարող առեառուր անել ըստ բուրժուական փորմութի, վորն ասում է՝ «ինքներս կուշտ չենք ուտի, բայց կարտահանենք»: Ըստ Արտաքի 1926—27 թվին ակտիվ սալզո (ավելցուկ) և մնացել 57 միլիոնի հասնող մի զումար: 1923—24 թվից հետո այս առաջին տարին ե, վոր արտաքին առեարի բարանուր փակվում է պլյուսով:

Հանրագումար կազմելով՝ յերկու տարվա ընթացքում աճուղ տեկումտի ընդհանուր զարգացման հետեւյալ պատկերն ենք ստանում: յեթե ընդունենք, վոր Սիության ազգային յեկամուտը 1924—25 թվին յեղել է 15,589 միլ. չերվ. ոուրլի, ապա՝ 1925—26 թվին ունենք 20,252 միլ. ոուրլի, այսինքն՝ մի առում աճել է 29,9 տոկոսով, իսկ 1926—27 թվին 22,560 միլ. ոուրլի, այսինքն՝ մի տարում աճել է 11,4 տոկոս: Ըստ Պետլանի վերստուգիչ թվերի՝ 1927—28 թվին պիտի ունենանք 24,208 միլ. ոուրլի, այսինքն՝ աճումը լինելու լի 7,3 տոկոս:

Յեթե ի նկատի ունենանք, վոր Միացյալ Նահանգների տարեկան միջին աճումը 3—4 տոկոսից չի անցնում (միայն մի անգամ ե, անցյալ գարու 80-ական թվականներին, Միացյալ Նահանգների ազգային յեկամուտն աճել 1—7 տոկոսով), իսկ մյուս յերկիրների, որինակ Անգլիայի ու Գերմանիայի, ազգային յեկամուտի տարեկան աճումը 1—3 տոկոսից ավել չի լինում, ապա՝ պիտի ընդունենք, վոր Վերջին տարիներու Սիության ազգային յեկամուտի աճման բարքը ունկորդային ե, համե-

հանուր արտադրանքը ամբողջ արգունաբերության 1924—25 թվի 81 տոկոսից հասել է 1926—27 թվի 86 տոկոսին, իսկ 1927—28 թվին համելու յե 86,9 տոկոսի, — արգունաբերության չը հանրախացրած սեկտորի զերը, այդ միհնույն ժամանակամիջանցում, տարեցտարի ընկնում է ամբողջ արգունաբերության արտադրանքի 1924—25 թվի 19 տոկոսից 1926—27 թվին իջել է 14 տոկոսի, իսկ 1927—28 թվին իջնելու յի մինչև 13,1 տոկոսի: Ինչ վերաբերում է մասնավոր կապիտալի խոռոր (ցենզավոր) արդյունաբերության մեջ կատարած զերին, պիտի տաել, զոր նա վոչ միայն հարաբերական չափով է իջնում (1924—25 թվին՝ 3,9 տոկոս, 1926—27 թվին՝ 2,4 տոկոս), այլ և բացարձակ (1924—25 թվին 169 միլիոն նախապատերազմյան սուբլի, 1926—27 թվին 165 միլիոն նախապատերազմյան սուբլի):

Մասնաբակապիտական տարրերի նման վաճառմ մենք տեսնում ենք նաև յերկրի ապրանքաշրջանառության բնագավառում: Այն ժամանակ, յերբ հանրախացրած սեկտորի բաժինը բովանդակ առևտրամիջնորդական շրջանառության մեջ կազմում էր 1924—25 թվին 72,6 տոկոս, միծաքանակի մեջ 90,6 տոկոս, մանրածախ՝ 57,3 տոկոս, 1926—27 թվին հանրախացրած սեկտորի աեսակարար կշիռը մեծացավ ամրող շրջանառության մեջ և հասավ 81,9 տոկոսի, միծաքանակ՝ մինչև 94,9 տոկոսի, մանրածախ՝ մինչ 67,4 տոկոսի, — մասնավոր սեկտորի բաժինն, այդ միջոցին, ամրող առևտրամիջնորդական շրջանառության մեջ 27,4 տոկոսից իջավ մինչև 18,1 տոկոսը, միծաքանակ՝ 9,4 տոկոսից մինչ 5,1 տոկոսը, մանրածախ՝ 42,7 տոկոսից մինչև 32,6 տոկոսը, ընդ սմին յենթագրվում է, զոր 1927—28 թվին մասնավոր սեկտորի աեսակարար կշիռն ընկնելու յի առևտրի բոլոր նյուղերում:

Յեզրակացուրյուն. Մեր յերկիրը դեպի սոցիալիզմ և գնում վասի ու արագ բարերով յեզ յետին պահեն և մզում ու ժողովական սնեսուրյունից բայց առ բայց գուրս վանում կապիտալիստական սարրեին:

Այս փաստը մեր առաջ մերկացնում է հետեւյալ հարցի հիմքը. ով ում: Այս հարցը զրել է լենինը 1921 թվին, նոր տնտեսական քաղաքականությունը մտցնելուց հետո: Կկարողանանք մեր սոցիալիստացրած ինդուստրիան կապել գյուղատնտեսության հետ՝ գուրս մղելով մասնավոր առևտրականին, մասնավոր կապիտալիստին և առևտուր անել սովորելով, թի մասնավոր կա-

պիտալը կհաղթի մեզ՝ պրոլետարիատի ու գյուղացիության մեջ պառակտում առաջացնելով: Այս, թե ինչպես եր զրված հարցն այն ժամանակի Ալֆմ, կարող ենք ասել զոր հիմնականում այս բնագավառում մենք վճռական հաջողություններ ունենք: Միայն կուցրեն ու ինելացնորները կարող են ժխտել այս Ալֆմ ում» հարցն արգեն ուրիշ բնույթ և ստանում: Նա առևտրի շրջանից անցնում է արտագրության շրջանը, անայնապրդավան արտագրության շրջանը, զյուղատնտեսական արտագրության շրջանը, ուր մասնավոր կապիտալն իր վորոշ տեսակարար կլին ունի և վորտեղից հարկավոր և նրան սիստեմատիկարար դուրս վանել:

Թույլ տվիք, իմ հաշվետվության այս մասը վերջացնելու համար, մի քանի խոսք ել ասեմ հաշվետվության յենթակա ժամանակաշրջանի ամենաբնորոշ նշանակումների մասին: Չեմ խոսի Սիէ Միության գիշ նախագահ ընկ. Ռեկովին տեղակալներ նշանակելու մասին, չեմ խոսի նույնպես Սիէ Միության ժամանակաշրջանի մասին և առաջարկության առաջարկան նշանակելու մասին, այլ կամենայի խոսի այն նշանակութերի մասին, վորոնք ցուցադրական նշանակություն ունեն: Դուք գիտեք, վոր ՌՍՖՀ ժՏԳԽ նախագահ ե նշանակվել ընկ. Լորովը: Նա մետաղագործ բանվոր ե: Գիտեք, վոր, կամենիի փոխարեն Մոսկվայի Խորհրդի նախագահ ե ընտրվել ընկեր Ռւխանովը՝ նույնպես մետաղագործ բանվոր: Գիտեք, նույնպես վոր, Զինովիեվի փոխարեն, Լենինգրադի Խորհրդի նախագահ ե ընտրվել ընկեր Կոմարովը՝ նույնպես մետաղագործ բանվոր: Ալքեմն յերկու մայրաքաղաքների «Լորդ-մերերը» մեզնում մետաղագործ բանվորներ

են: (Ծափահարություններ): Ճշմարիտ ե, նրանք ազնվական չեն, բայց մայրաքաղաքների տնտեսությունն ամեն տեսակ ազնվականից լավ են վարում: (Ծափահարություններ): Դուք կասեք, թե այդ մետաղագործան տեսքենց ե: Կարծում եմ, վոր այստեղ վոչ մի վատ բան չկա: (Զայներ՝ «Ընդհակառակը, շատ լավ ե»): Յանկանք, վոր կապիտալիստական յերկիրները, ցանկանանք, վոր Լոնդոնը, ցանկանանք, վոր Պարիզը հասնեն մեզ վերջապես և իրենց սեփական մետաղագործներին «Լորդ-մերեր» գարձնեն: (Ծափահարություններ):

III

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՌՊՊՈՋԻՑԻԱՆ

ա) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳՐԱԿՐՈՒՅՑ: Ընկերներ, յես չեմ յերկարացնի մեր կուսակցության թվական ու գաղափարական աճման մասին, թվանշաններ չեմ բերի, վորովհետեւ այդ մասին հանգամանորեն զեկուցելու յե ձեզ ընկեր կոսիորը: Չեմ խոսի նաև մեր կուսակցության սոցիալական կազմի ու որա հետ կապված թվերի մասին, վորովհետեւ ընկեր կոսիորն իր հաշվեավության մեջ ձեզ սպառող տվյալներ կներկայացնի: Կկամենայի մի քանի խոսք առել մեր կուսակցության զեկագար աշխատանքի բարձրացման ու վորակը լավացնելու մասին՝ թե տնտեսության և թե քաղաքականության ասպարիզում: Կար ժամանակ, ընկերներ—յերկու—յերեք տարի սրանից առաջ, յերբ ընկերների մի մասը, կարծեմ, Տրոցկու ղեկավարությամբ (Ծիծաղ-Զայներ «կարծեմ»), մեղադրում եր մեր նահանգական ու մարզային կոմիտեներին, մեղադրում եր մեր կ. կ., հաստատելով, վոր կուսակցական կազմակերպությունները կրնակեանու չեն և զուր աեզն են խառնվում յերկրի տնտեսական գործերին: Այս, կար մի այդպիսի ժամանակ: Ալժմ հաղիվ թե մեկի լիզուն պատվի կուսակցական կազմակերպություններին նման մեղադրանք շպրակիլու համար: Այս, վոր նահանգական ու մարզային կոմիտեները գրավեցին տնտեսական ղեկավարությունը, վոր կուսակցական կերպությունները կանգնած են տնտեսական շինարարության գործի զլուխ, այլ վոչ պոչին—այդ մի այնպիսի աչքի զարնող փաստ ե, վոր հերքել կարող են միայն կուլրերն ու խելացնորները: Ալքեմն այն փաստը, վոր մենք վորոշեցինք այս հումագումարին ներկայացնել տնտեսական շինարարության հնգամյա պլանի հարցը,

այս, արդեն այս հարցը խոսում է այն մասին, վոր կուսակցությունը շատ է առաջ գնացել՝ մեր տնտեսական շինարարությունը ծրագրով ղեկավարելու հարցում՝ թէ կենտրոնում և թէ տեղերում։ Վուսանք կարծում են, վոր այստեղ մի առանձին բան չկա։ Վհ, ընկերներ։ Այս մի առանձնահատուկ ու կարենը բան է, վորը պիտի ուշադրության արժանացնենք։ Յերեմի մատնացուց են անում ամերիկյան ու գերմանական տնտեսական որդանների վրա, վորոնք իբրև թե նույնպես ծրագրով են ղեկավարում ժողովրդական տնտեսությունը։ Վհ, ընկերներ, զրան դեռ չեն հասել և չեն ել հասնի նրանք, քանի վոր այնտեղ գոյություն ունին կապիտալիստական կարգերը։ Ծրագրով ղեկավարելու համար՝ հարկավոր է մի այլ՝ սոցիալիստական սիստեմ ունենալ և վոչ թէ կապիտալիստական, հարկավոր ե, դոնե, ազգայնացրած արդյունաբերություն, ազգայնացրած վարկային սփառեմ, ազգայնացրած հող ունենալ, հարկավոր ե զրուցի հետ սոցիալիստական կազ ունենալ, բանվոր դասակարգի իշխանություն ունենալ յերկրում և այլն։ Ճշմարիտ ե, նրանք ել պլանի նման մի բան ունեն, բայց այդ նախագուշակ-պլան ե, յենթագրություն-ովան ե, վորը վոչվորի համար պարտադիր չե և վորի հիմունքով յերկրի տնտեսություն ղեկավարելլ հնարավոր չե։ Ազգպես չե մեզնում։ Մեր պլանները վոչ թէ նախագուշակ-պլաններ են, վոչ թէ յենթագրություն-ովաններ են, այլ հրահանգ-պլաններ, վորոնք պարտադիր են կերպար որդանների համար և վորոնցով բնորոշվում են մեր տնտեսության ապագա զարգացման ուղիներն ամբողջ յերկրի մասշտարով առած։ Դուք տեսնում եք, վոր մենք այստեղ սկզբունքային տարբերություն ունենք։ Ահա թէ ինչու չեմ առում, թէ մեր տնտեսական զարգացման հնդամյա պլանն այս համագումարին ներկայացնելու պարզ փաստը, այն, նույն իսկ այս փաստը մի ցուցանիշ ե, վոր ծրագրով ղեկավարելու մեր աշխատանքը բարձրացել է։

Յերկար չեմ խոսի նաև մեր կուսակցության մեջ յեղած ներկումակցական ղեմոկրատիայի անման մասին։ Միայն կուլորը չեն տեսնում, վոր ներկումակցական ղեմոկրատիան, իսկական ներկումակցական ղեմոկրատիան, կուսակցական մասսաների ակտիվության իրական բարձրացումը մեզանում աճում ու զարգանում է։ Դեմոկրատիկի մասին են վայրախոսում։ Բայց ինչ ե ղեմոկրատիան կուսակցության մեջ։ Յեթե ղեմոկրատիա ասելով՝ հասկանում են քանի դույդ, նեղափոխությունից կորված,

ինտելիգենտների անվերջ վայրախոսելու և իրենց տպագրական որդանն ունենալու ազատությունը և ազն, — ապա՝ այդպիսի «գեցոկրատիա» մեզ հարկավորչե, վորովհետև այդ չնշին փոքրամասնության դեմոկրատիա յէ, վոր խախտում է հսկայական մեծամասնության կամքը։ Իսկ, յեթե ղեմոկրատիա ասելով հասկանում են կուսակցական մասսաների ազատությունը վճռելու մեր շինարարության հարցերը, կուսակցական մասսաների ակտիվության վերելքը, նրանց՝ կուսակցության տերը լինելու զգացմունքը զարգացնելը, — ապա՝ այդպիսի դեմոկրատիա մենք ունենք, նամեր հարկավոր ե և մենք, ինչ ել վոր լինի, կզարդացնենք նրան։ (Ծափահարություններ)։

Ընկերներ, չեմ յերկարացնել նաև այն մասին, վոր, ներկուսակցական ղեմոկրատիայի հետ միասին, մեզնում քայլ առքայլ աճում և կոլեգիալ ղեկավարությունը։ Վերցնենք մեր կեռու կ. Վ. Հ.՝ Երանք՝ 200—250 ղեկավար ընկերների հետ միասին, կազմում են մի կենտրոն, վորը սեգուլյար կերպով հավաքվում և և մեր շինարարության կարեռագույն հարցերը լուծում։ Այդ ամենաղեկմոկրատիկ ու կոլեգիալ յեղանակով գործող կենտրոններից մեկն ե, վորպիսին յերը և և ունեցել ե մեր կուսակցությունը։ Յեկ ինչ։ Մեթե փաստ չե, վոր մեր աշխատանքի կարեվոր հարցերի լուծումը վերին նեղ շրջաններից ավելի ու ավելի անցնում այդ լայն կենտրոնի ձեռքը, մի կենտրոն, վոր սերտորեն կապվում և շինարարության բոլոր ճյուղերի և մեր անսահման յերկրի բոլոր ուայունների հետ։

Յերկար չեմ խոսի նաև մեր կուսակցության կազմերի աճամ մասին։ Անփեճելի չե, վոր այս վերջին տարիներս մեր կուսակցության հին կազմերը լրացվել են վեր յելող նոր կազմերով, վորոնք, գլխավորապես, բանվորներ են։ Յեթե առաջ մեր կազմերը հարցուրներով ու հազարներով ելինք հաշվում, այժմ պիտի տասնակ հազարներով հաշվենք հաշվենք։ Կարծում եմ, վոր, յեթե ակսենք ամենացածր կազմակերպություններից՝ ցեխային, ովասկուսակցական կազմերը, վոր իրենց հսկայական մեծամասնությամբ բանվորներից են կազմված, այժմ 100,000 մարդուց քիչ չեն լինի։ Այս մեր կուսակցության մեծագույն աճումն ե։ Այս մեր կազմական փորձի աճումը, նրա կոմմունիստական կուլտուրայի աճումը,

Վերջապես՝ մի հարց եւ վորի մասին լերկարաբաններւ կարիք չկա, բայց վորը հարկավոր է նշել: Այդ կուսակցության հեղինակության աճումն և անկուսակցական բանվորների և, ընդհանրապես, մեր յերկրի աշխատավոր մասսաների շարքերում, ամբողջ աշխարհի բանվորների ու ճնշված դասակարգերի շարքերում: Այժմ հազիբ թե կարելի է կասկածել, վոր մեր կուսակցությունը դառնում է ամբողջ աշխարհի աշխատավոր մասսաների ազատագրության դրոշը, իսկ բոլշևիկ կոչումը՝ մի պատվավոր կոչում բանվոր դասակարգի լավագույն մարդկանց համար:

Ըսդհանրապես, այս ե, ընկերներ, կուսակցական շինարարության ասլարիկում մեր ձեռք բերած նվաճումների պատկերը:

Այս չի նշանակում, ընկերներ, վոր մեր կուսակցության մեջ պակասություններ չկան: Պահանջություններ կան և լուրջ պակասություններ: Թույլ տվեք մի քանի խոսք ասել այդ պակասությունների մասին:

Որինակի համար՝ վերցնենք կուսակցության կազմակերպությունների կողմից անտեսական և այլ կազմակերպությունները ղեկավարելու գործը: Միթե ամեն ինչ այդաեղ կարգին եւ վայրէ վոչ բոլորը: Հաճախ մեղնում՝ վոչ միայն տեղերում, այլ և կինորոշում՝ հարցերը լուծվում են, այսպես ասած, ընտանեկան կարգով, տնավարի: Իվան Իվանովիչը, այն ինչ կազմակերպության ղեկավարող բարձունքի անդամը, յենթագրենք, մի կոպտագույն սխալ և թույլ տվել իրեն, և գործը դրանով փչացել ե: Սակայն իվան Ֆեղորովիչը չի կամենում նրան քննադատել նրա սխալները ցուց տալ, նրա սխալներն ուղղել: Զի ուզում, վորովինեաւ «իրեն համար թշնամիներ վաստակելու» ցանկություն չունի: Սխալ են արել, գործը փչացրել, — ե, շատ հարկավոր ե: Մեզնից մի չի սխալում: Այսոր իս նրան՝ իվան Ֆեղորովիչին ինաւեմ, փաղն ել նա ինձ իվան իվանովիչին կինայի: Վորովինեաւ ինչ յերաշխիք կա, վոր յիս ել չեմ սխալի: Սքանչելի է: Խաղաղություն և բարեհաճություն: Սակայն կատարված սխալունքը փշացնում է մեր մեծագույն գործը: Վոչինչ: Մի կերպ տակից դուրս կգանք: Ահա, ընկերներ, մեր վորոշ պատասխանատու ընկերների սովորական դատողությունը Բայց ինչ և նշանակում այս, յեթե մենք՝ բոլշևիկներս, վոր ամբողջ աշխարհին ենք քննադատում, վոր, Մարքսի բառերով ասած, յերկինքն ենք սմբակուծում, այս, յեթե մենք այս կամ այն ընկերների հանգըս-

տության համար, հրաժարվենք ինքնաքննադատությունից, — ապա՝ պարզ չեմ մեթե, վոր զրանից, մեր մեծ դործի խորտակումից դուրս, ուրիշ վոչինչ չի դուրս կա: (Զայներ «ուղիղ ե»: Ծափահարություններ): Մարքսն ասում եր, վոր պրոլետարական հեղափոխությունը, ի միջի ալլոց, նրանով և տարբերվում, ամեն տեսուկ հեղափոխություններից, վոր նա իրեն և քննադատում և, իրեն քննադատելով, ամրապնդվում ե: Այս Մարքսի շատ կարեվոր ցուցմունքն ե: Յեթե մենք՝ պրոլետարական հեղափոխության ներկայացուցիչներս, աչքներս փակենք մեր պակասությունների հանգեպ, հարցերն ընտաներար լուծենք, փոխադարձար ծածկենք մեր սխալները և թողնենք, վոր խոցերը թափանցեն մեր կուսակցության որգանիզմի ներսը, — ապա ել ովիտի այդ սխալները, այդ թերություններն ուղղի: Միթե պարզ չե, վոր մենք կդադարինք պրոլետարական հեղափոխականներ լինելուց և անպատճառ կխորտակվենք, յեթե մեր միջից չվանինք այդ քաղքենիությունը, մեր շինարարության կարեոր հարցերը լուծելու այդ անավարությունը: Միթե պարզ չե, վոր հրաժարվելով ազնիվ ու ուղղամիտ քննադատությունից, հրաժարվելով մեր սխալներն ազնվորեն ու բացահայտ շտկումից, մենք փակում ենք առաջադիմելու, մեր գործը բարեկավելու և նորանոր հաջողություններ ձեռք բերելու ձանապարհը: Զի վոր մեր զարգացումը հարթ ու սահուն չե վերելում: Վոյն, ընկերներ, մեզնում կան դասակարգեր, հակամարտություններ յերկրի ներսը, մենք անցնալ ունենք, մենք ներկա ու ապագա ունենք, հակասություններ կան նրանց միջև, և մենք չենք կարող առաջ գնալ՝ կանքի աշխների սահուն տատանումներով: Մենք կովով ենք առաջ ընթանում, հակասությունների զարգացման ուղիով, այդ հակասությունները հաղթահարելու ձանապարհով, այդ հակասությունները հայտնաբերելու և վոչնչացնելու ձանապարհով: Բանի գառակարգերը գոյություն ունեն, մենք յերբեք չենք կարող այնպիսի վիճակ՝ ունենալ, յերբ հնարավոր կլինի ասել: Ե, փառք աստծու, այժմ ամեն ինչ լավ ե: Այս յերբեք չի լինի մեզնում, ընկերներ: Կյանքում միշտ մի բան մահանում ե: Բայց այն, ինչ վոր մահանում ե, չի կամենում հեշտությամբ մերնել այլ կովում ե իր գոյության համար, պաշտպանում է իր արդեն ուժագուրկ գործը: Կյանքում միշտ մի նոր բան ծնվում ե: Բայց այն, ինչ վոր ծնվում ե, հեշտությամբ չի ծնվում, այլ ճվճվում ե, ճչում, պաշտպանելով իր դոլության իրավունքները: (Զայներ «ուղիղ

հա: Ծափահարությունններ): Պայքար հնի ու նորի միջև, պաքքար մեռնողի և ծնվողի միջև,—ահա մեր զարգացման հիմունքը: Յեթե մենք պարզ ու ազնվորեն չենք նկատում և չենք հայտնաբերում աշխատանքի մեջ մեր կատարած սխալները, ինչպես վայել ե բոլցիկներին,—ապա մեր առջև փակում ենք ճանապարհը: Բայց չե վոր մենք առաջ գնալ ենք ցանկանում: Հենց այս պատճառով ել, վոր ուզում ենք առաջ գնալ, պիտի մեր կարևորագույն խնդիրներից մեկը դարձնենք աղնիվ ու հեղափոխական ինքնաքննադատությունը: Առանց դրան չկա շարժում զեպի առաջ: Առանց դրան զարգացում չկա: Բայց հենց այստեղ ե, վոր մեր գործը կազում ե: Դեռ ավելին. բավական և մի քիչ հաջողություն, և մենք մոռանում ենք մեր թերությունները, հանգըստանում ենք և հպարտանում: Մի յերկու-յերեք միծ հաջողություն ել—և ամեն ինչ վերջացավ: Մի յերկու-յերեք հաջողություն ես,—արդեն ամբարտավանանում ենք: Սակայն սխալները մնում են, թերություններն ապրում և խոցերը թափանցում կուսակցության որգանիզմի ներսը:

Ենկրորդ թերությունը: Այդ թերությունը վարչական մեթոդը կուսակցության մեջ մացնեն և, համոզելու մեթոդը, վոր կուսակցության նկատում վճռական նշանակություն ունի, վարչավորման մեթոդով փոխարինեն ե: Այս թերությունը պակաս փունդավոր չե, քան առաջինը: Ինչու: Վորովհետև նա մեր կուսակցության կազմակերպությունները, վորոնք ինքնապորձունակ կազմակերպություններ են, դատարկ գրասեներացին հաստատություններ գարձնելու վտանգ և ստեղծում: Յեթե ընդունենք, վոր մենք 60 հազարից վոչպակաս ամենաակտիվ աշխատակիցներ, վորոնք ցրված են տնտեսական, կոռպերատիվ ու պետական ամեն տեսակ հիմնարկություններում և այնտեղ կավում են բյուրոկրատիզմի դեմ, ապա՝ պիտի ընդունենք, վոր նրանց մի մասը, այլ հիմնարկություններում կովկենով բյուրոկրատիզմի դեմ, յերբեմն ինքն և բյուրոկրատիզմով վարակվում և իր հետ այդ թերություն կազմակերպության մեջ: Այս հանցանք չէ ընկերներ, այլ գժրախտություն, վորովհետև քանի պետությունը գոյություն ունի, այդ պրոցեսը, առավել կամ նվազ չափով կը շարունակվի: Հենց վորովհետև այդ հարցը կյանքում վորով արմատներ ունի, ուստի՝ այդ պատճառով ել հարկավոր և զինվել այդ պակասությունների դեմ կովկելու համար՝ բարձրացնելով կուսակցական մասսաների ակտիվությունը, սրանց դեպի մեր կու-

սակցության զեկավարության կողմից լուծելիք հարցերը քաշելով և սիստեմատիկորեն զարգացնելով ներկուսակցական դեմոկրատիան:

Երրորդ թերությունը: Այս թերությունը յերեվան և գալիս մեր մի շարք ընկերների մեջ, ընկերներ, վորոնք ցանկանում են հանդարտ ու սահուն լողալ՝ հոսանքի ուղղությամբ, առանց հեռանկարների, առանց իրենց հայացքը ապագայի խորքերը ուղղությունը, ցանկանում են այնպես լողալ վոր իրենց շուրջ տոնական ու հանդիսավոր արամագրության զգացվի, վոր մեղնում ամեն որ հանդիսավոր նիստեր լինին, վոր ամենուրեք հնչեն ծափահարությունները, և վոր մեզանցից յուրաքանչյուրը հերթով ամեն տեսակ նախագահությունների պատվագոր անդամ դասնա: (Ծիծաղ, ծափահարություններ): Ահա, ամենուրեք տոնական տրամադրության տեսնելու այս անդուսապ ցանկությունը, այս ձգտումը զեպի դեկորացիաները, զեպի ամեն տեսակ հորելլաններ՝ կարեվոր ու անկարեկոր՝ այս ցանկությունը լողալ, քանի լողալու հնարավորություն կա, առանց նայելու, թե այդ ուր և տանում: (Ճիծաղ, ծափահարություններ)... ահա հենց սրանք են կազմում մեր կուսակցության գործնական կյանքի յերրորդ թերության եւ յությունը՝ մեր թերությունների հիմքը՝ մեր կուսակցական կենցաղում: Արդյոք պատահել և ձեզ տեսնել այնպիսի թիվավարներ, վորոնք ազնվորեն են թիվավարում, քրաինքը ճակատներին, բայց չեն տեսնում, թե հոսանքն իրենց ուր և տանում: Ազդպիսի թիվավարներ իսկ տեսել են Յենիսեյի վրա: Նրանք ազնիվ են ու անխոնջ, բայց նրանց գժրախտությունն այն ե, վոր նրանք չեն տեսնում ու չեն ել կամենում տեսնել այն, վոր ալիքները նրանց ժայտին կզարկեն, չեն տեսնում, թե վորտեղ է իրենց կորուս սպասում: Նույնը պատահում է և մեր մի քանի ընկերների հետ: Թիվավարում են աղուցությամբ, առանց ձեռքները ծալելու, լողում են սահուն յենթարկվելով հոսանքին, բայց թե այդ հոսանքը նրանց ուր և տանում, վոչ միայն չգիտեն, այլ և չեն ուղղում իմանալ: Աշխատանքը առանց հեռանկարների, աշխատանքը առանց զեկավարությունը: Խոկ արգայունքները: Արդյունքները պարզ են, բայց պատճեն նրանք բողբոնում են, ապա գորշալուն գառնում, հետո նրանց ծածկում և քաղքենիության տիզմը և ճահճացնում, իսկ վերջը նրանք գառնում են սովորական քաղքենիներ: Ահա, այս եսկամական այսակարման ուղին:

Ահա, ընկերներ, մեր կուսակցության գործնական կյանքի ու կենցաղի մի քանի թերությունները, զորոնց մասին յես կամեցա մի քանի դառը խոռքեր ասել:

Իսկ այժմ թույլ տվեք անցնել դիսկուսիալին և մեր, այսպէս կոչված, ոպազդիցիային:

Բ) Դիսկուսիալ արգունեք.— Արգուք դիսկուսիան մարկե իմաստ, զորեե արժեք ունի: Յերբեմն ասում են, ինչո՞ւ համար բորբոքեցիք այդ դիսկուսիան, ում և հարկավոր նա, արգուք լավ չեր լինի վիճելի հարցերը ներքին կարգով լուծել, առանց վիճարանությունը գրսելորելու: Այս ուղիղ մտահոգություն չե, ընկերներ: Յերբեմն դիսկուսիան բացարձակորեն անհրաժեշտ և և անպայման ոգտակար: Ամբողջ հարցն այն ե, թե՝ ինչպիսի դիսկուսիա յի հարկավոր: Յեթե դիսկուսիան ընթանում և ընկերական շրջանակներում, կուսակցական շրջանակներում, յեթե նա նպատակ և գարձնում ազնիվ ինքնաքննադատությունը, կուսակցության թերությունների քննադատությունը, յեթե նա, ուրեմն, բարեկալում և մեր գործը և զինում բանվոր դասակարգը, ապա այդպիսի դիսկուսիան հարկավոր և և ոգտակար: Բայց լինում և և այլ կարգի դիսկուսիա, զորն իրեն նպատակ և գնում վոչ թե մեր ընդհանուր գործի բարվոքումը, ուլ նրա վատթարացումը, վոչ թե կուսակցության ամրապնդվելը, այլ նրա բայքայումը: Սովորաբար՝ այդպիսի դիսկուսիան վոչ թե զինում և պրոլետարիատին, այլ զինաթափ և անում: Ազգակին դիսկուսիա մեզ հարկավոր չի: (Զայնե՞ «Ուղիղ ե»: Ծափահարություններ):

Յերբ ոպազդիցիան պահանջում եր, զոր համամիութենական դիսկուսիա հայտարարենք համագումարի բացումից լիրեք ամիս առաջ, նախքան կկ կողմից թեղիսներ մշակելն ու այդ թեղիսները հայտարարելը, նա ցանկանում եր մեր զին ֆաթաթել այնպիսի դիսկուսիա, զորն անխուսափելիորեն պիտի հեշտացներ մեր թշնամիների գործը, բանվոր դասակարգի թշնամիների գործը, մեր կուսակցության թշնամիների գործը: Ահա, հենց այդ պատճառով եր, զոր կկ հակառակեց ոպազդիցիայի ծրագրերին, մեզ հաջողվեց դիսկուսիան դնել կանոնավոր հիմքերի վրա՝ նրա համար հիմունք գարձնելով կկ թեղիսները, զորոնք հայտարարված են համագումարի առիթով: Այժմ մենք կարող ենք առանց տատանվելու ասել, զոր դիսկուսիան մեզ պլյուս տվեց: Ինչ վերաբերում և ընտանիկան գաղտնիքը մեր տնից հա-

նելուն, ընկերներ, պիտի ասեմ, զոր այդ անմտություն և: Մենք մեզ ու մեր սխալներն ամբողջ կուսակցության առաջ ազատ քննադատելուց յերբեք չենք վախեցել ու ապագայում ել չենք վախենալ: Բայց եթեմի ուժը, իսկապես, հենց այն ե, զոր նա քննադատությունից չի վախենում ու իր պակասությունները քննադատությունից ե լինանդակալում՝ հետագա տառջապինության համար: Ազգպատվ ներկա դիսկուսիան հանդիսանում և մեր կուսակցության ուժի ցուցանիշը, նրա հզորության ցուցանիշը:

Զպիտի մոռանալ, զոր ամեն մի մեծ կուսակցության մեջ, մանավանդ այնպիսի կուսակցության մեջ, ինչպիսին մերն ե, զորն իշխանության գլուխ և կանգնած և զորն իր մեջ ունի զուուցիների ու ծառայող տարբերի մի մասը, զորոշ ժամանակի ընթացքում հավաքվում են զորոշ ինպիֆերենտ, գեղի կուսակցության զործնական աշխատանքներն անտարբեր, տարբեր, զորոք քվելարկում են աշքները փակած ու լողում հոսանքի ընթացքով: Ազգպիսի տարբերի մեծ քանակության գոյությունը չարեք ե, զորի գեմ հարկավոր և կավել: Այդ տարբերը կազմում են մեր կուսակցության ճահիճը: Դիսկուսիան նշանակում է գանգատով դիմելայդ ճահիճին: Ոպազդիցիոններները նրան զանգատով դիմում են այն պատճառով, զորպեսզի նրա վորոշ մասն անջանեն: Յեկ իրոք նրանք կտրում, անջատում են նրա վատագույն մասը: Կուսակցությունը զանգատով նրան և զիմում այն պատճառով, զոր նրա լավագույն մասը կտրի, անջատի ու հազորդակից անի կուսակցության ակտիվ կյանքին: Հետեանքը լինում և այն, զոր ճահիճն սուսպիած և լինում ինքնորոշվել՝ հսկառակ իր ամբողջ իներառության: Յեկ իրոք նա, այդ ըստոքների հետեանքով, ինքնորոշվում ե՝ իր մի մասը ոպազդիցիային տալով, մյուսը՝ կուսակցությանը, և այդպիսով զարգարում և ճահիճ լինելուց: Այդ ել մեր կուսակցության զարգացման ընդհանուր բալանսի պլյուսներից ե: Ներկա դիսկուսիայի հետեանքով մեզնում ճահիճը փոքրացել և, կամ ըստոքին զարգարել և կամ դադարում և գոյություն ունենալուց: Դիսկուսիայի պլյուսն և այս:

Դիսկուսիայի արդյունքները: Արդյունքները նայտնի լին: Մինչև յերեկ, ինչպիս պարզվում ե, հոգուտ կուսակցության ճահիճն առվել 724 հազար ընկերներ, հոգուտ ոպազդիցիայի չորս հազարից քիչ ավել: Ահա ձեզ արգայունքը: Ոպազդիցիոններները գոյուում ենին, զոր կկ կտրվել և կուսակցությունից, կուսակցու-

թիունը կտրվել և դասակարգից, վոր 55 տոկոսն անկասկածելիութեն իրենց կողմն ե, բայց պարզվեց, վոր ոպապողիցիային համակրողների թիվը մի տոկոսից ել քիչ ե: Ահա զիսկուսիայի հետևանքը:

Ի՞նչպես պատահեց, վոր ամբողջ կուսակցությունը և նրան ետ ել բանվոր դասակարգն այդպիս խստորեն մեկուսացըթիւն ոպապողիցիային: Չե վոր ոպապողիցիան զլխավորում են հայտնի մարդիկ, անունով, վորոնք կարողանում են ուեկամ անել իրենց մասին (Զայներ՝ «Ճշմարիտ ե»), մարդիկ, վորոնք համեստության ցավ չունեն (ծափահարություններ), վորոնք կարողանում են իրենց գովաբանել ու փայլուն յերևալ: Այդպես լեզավ այն պատճռով, վոր ոպապողիցիայի դեկավար խմբակցությունը դուրս ցեկավ մահր բուրժուական ինտելիգենցիայի մի խմբակ՝ կտրված կլանքից, կտրված հեղափոխությունից, կտրված կուսակցությունից ու բանվոր դասակարգից: (Զայներ՝ «Ճշմարիտ ե»: Ծափահարություններ): Քիչ առաջ իս խոսեցի մեր կուսակցության հաջողությունների մասին, արդյունաբերության ասպարիզում, առևտի ասպարիզում, ընդհանրապես տնտեսության ասպարիզում և արտաքին քաղաքականության ասպարիզում մեր ձեռք բերած նվաճումների մասին: Բայց ոպապողիցիան գործ չունի այդ նվաճումների հետ: Նա չի նկատում նրանց, վորովհետեւ չի ցանկանում նկատել: Չի ցանկանում նկատել մասամբ իր տգիտության շնորհիվ, մասամբ ել կրանքից կտրված ինտելիգենտի հալտնի համառության շնորհիվ:

գ) Կուսակցության ու ոպապողիցիայի միջեվ գոյություն ունեցող եթևական տարածայնությունները: Դուք կհարցնեք, թե, ի վերջո, վորոնք են կուսակցության ու ոպապողիցիայի միջինարածայնությունները, վոր հարցերի մասին են այդ տարածայնությունները: Բոլոր հարցերի մասին ընկերներ (Զայներ՝ «Ճշմարիտ ե»): Մոտերքս կարգացի մի անկուսակցական բանվորի Մուլվակում արած հայտարարությունը, մի բանվորի, վոր մըտնում ե, կամ արգեն մտել և կուսակցության մեջ: Ահա, թէ ինչպես և բանաձեռում նա կուսակցության ու ոպապողիցիայի տարածայնության հարցը.

«Առաջ մենք վորոնում ենինք, թէ վորն և կուսակցության ու ոպապողիցիայի անհամաձայնությունը: Իսկ այժմ՝ ել չես կարող գտնել թէ նրանք վոր հարցումն են կուսակցության հետ համաձայն: (Ծիծաղ: Ծափահարություններ):

Ոպապողիցիան կուսակցությանը գեմ և բոլոր հարցերում, այդ պատճառով ել, իս լ'թե ոպապողիցիայի կողմանակից լինելի, կուսակցության մեջ չեյի մտնիլ»: (Ծիծաղ: Ծափահարություններ): (Նայել «ՀՀ ՎԵՍՏԻՅԱ», № 264):

Ահա, թէ ինչպես սուր և միենույն ժամանակ հակիրճ և արտահայտվում բանվորը յերբեմն: Յես կարծում եմ, վոր այս ոպապողիցիայի՝ գեպի կուսակցությունը, դեպի նրա գաղափարախոսությունը, նրա ծրագիրն ու տակտիկան՝ ունեցող վերաբերմունքի ամենասուր ու ամենաճիշտ բնորոշումն ե, չենց այս պատճառով, վոր ոպապողիցիան կուսակցության հետ տարակարծիք և բոլոր հարցերում, հենց այս պատճառով՝ ոպապողիցիանը վոչ այլ ինչ ե, քան մի խմբակ՝ իր գաղափարախոսությամբ, իր ծրագրով՝ իր տակտիկայով ու իր կազմակերպչական սկզբունքներով հանդերձ: Այն բոլորն, ինչ վոր անհրաժեշտ և մի նոր կուսակցության համար, ոպապողիցիան ունի: Մի շատ «Փոքրիկ» բան և միայն պակասում նրան. ուժն և պակասում: (Ծիծաղ: Ծափահարություններ):

Յես կարող եմ թվել յոթը հիմնական հարցեր, վորոնց մասին տարածայնություն կա կուսակցության ու ոպապողիցիայի միջև:

Առաջինը՝ մեր յերկում հաղթական սոցիալիստական շինարարության հնարավորության հարցն ե: Յես կանգ չեմ առնել փաստաթղթերի ու ոպապողիցիայի այդ հարցի մասին արած հայտարարությունների վրա: Դրանք հայտնի ին ամենքին և կը ըկնելու կարեր չկա: Ամենքի համար պարզ ե, վոր ոպապողիցիան ժխտում և սոցիալիզմի հաղթական շինարարության հնարավորությունը մեր յերկում: Մերժելով այդպիսի հնարավորությունը նա պարզ և ուղղակի գործում և դեպի մենշևկացի: Կիրքերը, Տվյալ հարցն այդ կերպ ձեակերպելը նորություն չե ոպապողիցիայի ներկա դեկավարների համար: Այդ ձեակերպումից ելին յելնում կամենեն ու Զինովելը, յերբ հրաժարվում ելին մասնակցել Հոկտեմբերյան ապստամբությանը: Այն ժամանակ նրանք ուղղակի ասում ելին, վոր ապստամբություն բարձրացնելով: Մենք գեպի կորուստ ենք գնում, վոր հարկավոր և Սահմանադիր ժողովին սպասել, վոր սոցիալիզմի համար անհրաժեշտ պայմանները չեն հասունացել և շուտ ել չեն հասունանա: Ալդուդից եր յելնում նաև Տրոցկին, յերբ գնում եր մասնակցելու ապստամբությանը, վորովհետեւ նա ուղղակի ասում եր, թէ՝ յեթե առաջ

գել կամ նվազ շափով մոտիկ ապագայում Արևմուտքի պրոլետարիատի հաղթական հեղափոխությունը մեզ ողնության չհասնի, ապա՝ հիմարություն կլինի կարծել, թե հեղափոխական Ռուսաստանը կարող է դիմադրել կոնսերվատիվ Յելրոպացին:

Իսկապես, ինչպես ելին մասնակցում ապստամբությանը կամենան ու Զինովիլը մի կողմից, Տրոցկին՝ մյուս կողմից, և Լենինն ու կուսակցությունը՝ լերորդ կողմից: Այս մի հետաքրքիր հարց է, ընկերներ, վորի մասին արժեք մի քանի խոսք առել: Դուք զիտեք, վոր Կամենան ու Զինովիլը գնում ելին ապստամբությանը մասնակցելու վախից ստիպված: Լենինը նըրանց քշում եր տակոտվ՝ սպառնալով զույս առել կուսակցությունից (ծիծաղ, ծափահարություններ), և նրանք հարկադրված էին քարշ գալ ապստամբության լետերից: (Ծիծաղ, ծափահարություններ): Տրոցկին կամովին եր մասնակցում ապստամբությանը: Բայց նա պարզ ու անվերապահ չեր գնում, այլ վերապահումով, մի հանգամանք, վոր նրան արդեն այն ժամանակ մուտքում եր Կամենանին ու Զինովիկին: Հետաքրքրական և այն, վոր հենց Հոկտեմբերից առաջ, 1917 թվի հունիսին, Տրոցկին հարձար համարեց Լենինը վերահաստարակել իր հին բրոցուրը՝ «Խաղաղության ծրագիրը»: Նա, կարծես, գրանով ուզում եր առել, վոր ինքը մասնակցում և ապստամբությանը իր սեփական գրողի ներքո: Ի՞նչի մասին ե խոսում նա այդ բրոցուրում: Նա այդտեղ վիճաբանում է Լենինի հետ սոցիալիզմի մի յերկում հաղթանակելու հնարավորության մասին, գտնում է, վոր Լենինի այդ միտքը սխալ է, պնդում և թե իշխանությունը պիտի գրավել, բայց յեթե Արևմտան Յերոպայի հաղթական բանվորների ոգնությունը չհասնի, ապա անհուսալի յե կարծել, վոր հեղափոխական Ռուսաստանը կարող է դիմադրել կոնսերվատիվ Յելրոպային, իսկ ով չի հավատում Տրոցկու քննադատությանը, նա տառապում է ազգային սահմանափակությամբ: Ահա մի քաղվածք Տրոցկու այդ բրոցուրից:

«Առանց ուրիշներին սպասելու մենք սկսում ու շարունակում ենք կոիվն ազգային հողի վրա, կատարյալ համոզմունքով, վոր մեր նախաձեռնությունն ուրիշ լերկերներում ել կոիվ սկսելու խթան կդառնա, իսկ յեթե այդ չըկատարվի, ապա՝ իզուր և կարծել—ինչպես վկայում են պատմության փորձն ու մեր տեսական նկատառութները,—վոր, որինակ, հեղափոխական Ռուսաստանը

կարող ե գիմագրել կոնսերվատիվ Յելրոպային».. «Սոցիալական հեղափոխության հեռանկարները միայն ազգային շրջանակներում դիտելը ազգային նույն սահմանափակության զոհ դառնալ և նշանակում, վոր սոցիալ-պատրիոտիզմի ելությունն է կազմում»: (Տրոցկի, «1917», հատոր III, եջ 90):

Ահա, ընկերներ, տրոցկիստական այն վերապահումը, վորը բավականաչափ պարզում է մեղ կամենի ու Զինովիկի հետ կապած նրա ըլովի արմատներն ու հիմքերը:

Սակայն Լենինն ինչպես եր մասնակցում ապստամբությանը, կուսակցությունն ինչպես եր մասնակցում: Դուրձյալ վերապահումով: Վաչ, Լենինն ու նրա կուսակցությունն առանց վերապահումների ելին կովիլու գնում: Ահա, մի քաղված Լենինը մի նշանավոր՝ «Պրոլետարիատի ոսկմական ծրագիրը» կոչված, հոգվածից, վոր հրապարակված և արտասահմանում, 1917 թվի սեպտեմբերին:

«Սոցիալիզմը, հաղթանակելով մի յերկրում, ամենենին ել միանգամից չի վերացնում բոլոր պատերազմները: Ընդհակառակը, նա յենթագրում է, վոր պատերազմներ կլինեն: Կապիտալիզմի զրագացումը զանազան յերկիրներում վերին աստիճանի անհամաշափ և կատարվում: Ազգանքային արտգրության ժամանակ ուրիշ կերպ ել լինել չի կարող: Ազատեղից ել անխախտ յեղբակացություն և ծաղում. սոցիալիզմը չի կարող բարեւ յերկիրներում միենույն ժամանակ հաղթանակել: Առաջ նա մի կամ մի քանի յերկիրներում կհաղթի, իսկ մյուսները մի առ ժամանակ կշարունակեն մնալ բուրժուական կամ նախարարժուական վիճակում: Այս հանգամանքը վոչ միայն անհամաձանություններ կառաջացնե, այլ և այն, վոր մյուս յերկիրների բուրժուազիան ուզզակի կծովի խորտակել սոցիալիստական պետության հաղթական պրոլետարիատին: Այսպիսի գեպքերում պատերազմը մեր կողմից կլինի արդար ու որինավոր: Այդ կլինի պատերազմ հանուն սոցիալիզմի, հանուն մյուս ժողովուրդների ազատագրման բուրժուազիալի ձեռքից»: (Լենին, «Պրոլետարական հեղափոխության ոսկմական ծրագիրը»), «Յանիկ Նիհուտա Լենին», մաս II, եջ 7): Դուք տեսնում եք, վոր այստեղ հարցը բոլորովին այլ ձեռքագություն է ստացել: Յեթե Տրոցկին մասնակցում եր ապըս-

տամբությանը մի վերապահումով, վոր նրան մոտեցնում եր Կամենեին ու Զինովևին, հաստատում եր, վոր պրոլետարական իշխանությունն ինքնին դեռ մի առանձին բան չի ներկայացնում, յեթե ժամանակին դրսից ոգնություն չհասնի, — Լենինը, ընդհակառակը, ապստամբությանը մասնակցում եր առանց վերապահումների, պնդելով, վոր մեր յերկրում հաստատված պրոլետարական իշխանությունը պիտի հիմք դառնա և ոժանդակի մյուս յերկիրների պրոլետարիատին՝ բուրժուազիայի լծից աղատվելու համար:

Ահա, թե ինչպես ելին բոլցիկները բարձրացնում Հոկտեմբերյան ապստամբությունը և թե ինչու Տրոցկին Կամենեին ու Զինովևի հետ ընդհանուր լեզու գտավ Հոկտեմբերյան հեղափոխության տասնամյակին:

Կարելի յէ դիալոգի ձևով պատկերացնել ոպպողիցին բլոկը կազմակերպելու ժամանակ յեղած զրուցը՝ մի կողմից Տրոցկու, մյուս կողմից Կամենեին ու Զինովևի միջև։

Կամենեն ու Զինովևը Տրոցկուն. «Ճեսնում եք, թանկագին ընկեր, վերջ ի վերջո մենք իրավացի դուրս յեկանք, ասելով, վոր հարկավոր չե Հոկտեմբերյան ապստամբությունը կատարել, այլ պետք ե սպասել Սահմանադիր ժողովին և այն։ Այժմ տեսնում եք, վոր յերկիրն այլասերվում ե, իշխանությունն ալլասերվում ե, մենք գետի կորուստ ենք գնում, և մեզնում վոչ մի սոցիալիզմ ել չի լինի։ Հարկավոր չեր ապստամբությունը իսկ դուք կամովին մասնակցեցիք ապստամբությանը։ Դուք մեծ սխալ գործեցիք։»

Տրոցկին պատասխանում ե նրանց. «Պոչ, թանկագին կոլլեգներ, իմ նկատմամբ գուռք անարդար եք։ Ձիշտ ե յես մասնակցեցի ապստամբությանը, բայց ինչպես, դուք այդ մասին խոսելը մոռացաք։ Չե վոր յես ուղղակի չմասնակցեցի ապստամբությանը, այս վերապահումով։ (Ընդհանուր ծիծաղ)։ Յեվ վորովհետեւ այժմ պարզվում ե, վոր զբաց ոգնություն չպիտի սպասել, պարզ ե, վոր գործը գետի կորուստ ե գնում, ինչպես յես նախագուշակել եմ «Խաղաղության ծրագրի» մեջ։»

Զինովիչը ու Կամենել նիստին. «Իսկապես այդպես ե, վերապահման մասին մենք մոռացել ելինք։ Այժմ պարզ ե, վոր մեր բլոկը գաղափարական տեսակետից հիմնավորված ե»։ (Ընդհանուր ծիծաղ. Ծափահարություններ)։

Ահա, թե ինչպիսի դիրք ե բռնել ոպպողիցիան մեր յերկ-

բռնել հաղթական սոցիալիստական շինարարությունը ժխտելու հարցում։

Սակայն վերն ե այսպիսի դիրք բռնելու իմաստը։ Այդ նըշանակում ե, վոր պիտի անձնատուր լինել։ Ում առաջ, Պարզ ե, վոր մեր յերկրի կապիտալիստական տարրերի առաջ։ Ել ում առաջ։ Համաշխարհային բուրժուազիայի առաջ։ Իսկ ձախ Փրազները, իսկ հեղափոխական ծամածությունները, — ինչ յեղանդրանք։ Նրանք փոշիացան։ Լավ թափ տվեք մեր ոպպողիցիային, մի կողմ նետեք նրա հեղափոխական ֆրազիոնդիան, — և կտեսնեք, վոր նրանց հոգու խորքում անձնատվությունն ե նստած։ (Ծափահարություններ)։

Յերկրորդը՝ պրոլետարիատի դիկտատուրայի հարցն ե։ Պրոլետարիատի դիկտատուրա գոյություն մենի մեղնում, թե չե, Միքիչ տարրինակ ե այս հարցը (ծիծաղ)։ Բայց և այնպես ոպպողիցիան իր ամեն մի հայտարարության մեջ զնում ե այլ հարցը։ Ոպպողիցիան ասում ե, վոր մեղնում տերմիգորյան այլասերում կա։ Իսկ այդ ինչ և նշանակում։ Այդ նշանակում ե, վոր մեղնում պրոլետարիատի դիկտատուրա չկա, վոր մեղնում խորտակում ու կործանվում են և եկոնոմիկան, և քաղաքականությունը, վոր մենք վոչ թե գետի սոցիալիզմ ենք գնում, այլ գետի կապիտալիզմ։ Այս բոլորը տարրինակ ե ու մի քիչ ել ալիքամար։ Սակայն ոպպողիցիան պնդում ե իրենը։ Ահա ձեզ, ընկերներ, մի տարածայնություն ել։ Սրա վրա յել հիմնվում ե Տրոցկու հայտնի թեզիսը կեմանսոյի մասին։ Յեթե իշխանությունը այլասերվել ե կամ այլասերվում ե, ապա արժե՞ խնացել նրան, պաշտպանել և ողներ Պարզ ե, վոր չարժի։ Յեթե այդ իշխանությունը «Քերացնելու» համար բարեհաջող պայմաններ ատեղծվեն, ասենք թշնամին մոտենա Մուկիվային ու նրանից միայն 80 քիոմետր հեռու գտնվի, — միթե պարզ չե, վոր պիտի հանգամանքը ներին ոգտագործել այդ իշխանությունը սրբելու ու նրա տեղը նորը՝ կեմանսիստականը, ախինքն՝ տրոցիկիստականը, գնելու համար։ Պարզ ե, վոր լենինյան վոչինչ չկա այստեղ։ Այս, մաքուր մենշենիզմ ե։ Ոպպողիցիան հանգել և մենշենիզմի։

Յերկրորդը՝ բանվոր դասակարգի ու միջակի բլոկի հարցն ե։ Ոպպողիցիան սիշտ թագցրել ե իր բացասական վերաբերմունքը դեպի այդ բլոկի իդեան։ Նրա պլատֆորման, նրա հակաթեղերը նշանակալից են վոչ այնքան նրանով, ինչ ասված ե այնտեղ, վորքան նրանով, ինչ վոր աշխատում ե ծածկել ոպպողիցիան

բանվոր գասակարգից Բայց ահա գտնվեց մի մարդ ի. Ն. Սմիրնովը, դարձաւ ոպառղիցիալի լիդերներից մեկը, վորը քաջություն ունեցավ ձմարտություն ասելու ոպառղիցիալի մասին, վորը նրա դեմքը պարզեց մարդկանց առաջ: Յեվ ի՞նչ դուքս յեկամ: Պարզվեց, վոր մենք դեպի կորուստ ենք գնում և, չեթե ուզում ենք ազատվել, պիտի միջակի հետ ունեցած ըլոկը քանդենք: Շատ ել խելոք չե, բայց պարզ է: Ազտեղ ել, վերջապես, մենշեկյան ականջները յերեացին ի տես ամենքի:

Չորրորդը՝ մեր հեղափոխության բնույթի հարցն է: Յեթե մերժում է մեր յերկրում սոցիալիզմ կառուցանելու հնարավորությունը, ևթե մերժում է պրոլետարիատի դիկտատուրայի գոյությունը և բանվորա-գյուղացիական ըլոկի անհրաժեշտությունը, — ապա ել ի՞նչ ե մնում այն ժամանակ մեր հեղափոխությունից, նրա սոցիալիստական բնույթից: Պարզ է, վոր վոչինչ, կատարելապես վոչինչ: Պրոլետարիատը իր ձեռքն առավ լիշտանությունը, իր վերջակետին՝ հասցրեց բուրժուական հեղափոխությունը, գյուղացիությունն այլ ևս հեղափոխության հետ գործ չունի, վորովհետեւ նա արդին ստացել է հողը, — նշանակում է, վոր պրոլետարիատը կարող է հնանանալ և տեղ մաքրել ուրիշ դասակարգերի համար: Յեթե աշխատենք հասնել ոպառղիցիայի հայացքների արմատներին, կտեսնենք, վոր ահա այս են նրա ձեղակերպումը: Ահա ձեզ մեր ոպառղիցիալի անձնատրության բոլոր արմատները: Իզուր չե, վոր Աբրամովիչը նրանց գովում է:

Հինգերորդը՝ գաղութային հեղափոխությունները լենինյան ցուցանքներով զեկավարելու հարցն է: Լենինը յելակետ ուներ իմպերիալիստական ու ձնշված պետությունների տարբերությունը, կոմմունիզմի իմպերիալիստական պետություններում ունենալիք քաղաքականության ու գաղութային յերկրներում ունենալիք քաղաքականության տարբերությունը: Յենելով ալսարբերությունից՝ նա, դեռ պատերազմի ժամանակ, ասում եր, վոր հայրենիքը պաշտպանելու գաղտփարը իմպերիալիստական յերկրներում կոմմունիզմի համար ընդունելի չե և հականեղափոխական և ու միանդամայն ընդունելի յե ու արդար ձնշված յերկրներում, վորոնք պատերազմ են մղում իմպերիալիզմի դեմ: Հենց այս պատճառով ել նա ընդունում եր, վոր կարելի յե վորոշ չափով ու վորոշ ժամանակով վոչ միայն ըլոկ, այլ և դաշն կնքել գաղութային յերկրների բուրժուազիայի հետ, յեթե այդ բուրժուազիան կովում է իմպերիալիզմի դեմ և կոմմունիստներին

չի խանգարում, վոր սրանք բանվորներին ու գյուղացիական չքավորությանը կոմմունիզմի վոզով գաստիարակեն: Ոպառղիցիան մեղանչում և նրանով, վոր վերջնականապես կարում է իր կապերը լենինի այս սկզբանքներից, զլորվելով դեպի և ինտերնացիոնալի տեսակետը, վոր ժխտում է զաղութային յերկիրների իմպերիալիստական պետությունների դեմ վարելիք կռիֆերի պաշտպանության նպատակահարմարությունը: Արանով ել պիտի բացատրել բոլոր այն գժրախստությունները, վոր կրնց մեր ոպառղիցիան չինական հեղափոխության հարցում: Ահա ձեզ մի տարածախնություն ել:

Վեցերորդը՝ համաշխարհային բանվորական շարժման միասնական ճակատի տակտիկայի հարցն է: Ոպառղիցիան այստեղ մեղանչում և նրանով, վոր իր բոլոր կապերը կտրում է բանվոր գաստիարգի միլիոնավոր մասսաներին հետզհետեւ կոմմունիզմի կողմը քաշելու լենինյան տակտիկայից: Մենակ կուսակցության քաղաքականության ուղիղ լինելու պայմաններում չեն բանվոր դասակարգի միլիոնավոր մասսաները զրավում ու անցնում կոմմունիզմի կողմը: Կուսակցության ուղիղ քաղաքականությունը մեծ բան է, բայց այդ դեռ ամեն ինչ չե, վորպեսզի բանվոր գաստիկարգի միլիոնավոր մասսաներն անցնեն կոմմունիզմի կողմը, անհրաժեշտ է անհրաժեշտ մասսաներն իրենց սեփական ժամանակակից համար անհրաժեշտ է կուսակցության հմուտ ու խելոք աշխատանքը՝ կուսակցության հմուտ ու խելոք աշխատանքը՝ միլիոնավոր մասսաներին համոզի կողմը, անհրաժեշտ է, վոր մասսաներն իրենց սեփական փորձով համոզվեն, վոր կոմմունիզմի քաղաքականությունն ուղիղ եւ: Մակայն, վորպեսզի մասսաները համոզվեն, հարկավոր է ժամանակ, անհրաժեշտ է կուսակցության հմուտ ու խելոք աշխատանքը՝ մասսաներին իրենց գաղաքականության հմուտ ուղիղ համոզի կողմը, անհրաժեշտ է կուսակցության հմուտ ու խելոք աշխատանքը՝ միլիոնավոր մասսաներին համոզի կողմը, անհրաժեշտ է կուսակցության հմուտ ուղիղ համոզի կողմը, ի դեպքու միլիոնավոր գաղաքականությունը ձգմարիտ է: Միայն այն ժամանակ, ի կողմին հետեւ այդ մասսաները հնարավորություն չունելին համոզվելու, վոր մեր իրոք ուղիղ քաղաքականությունը ձգմարիտ է: Մուրժության այն ժամանակ, յերբ հսելների ու մենշեկինների մանր հիմնական հարցերում խալառական կամքեցին միայն այն ժամանակ, միայն այն ժամանակ, թյունն ուղիղ է, այն, միայն այն ժամանակ մասսաներին զեղի

ապստամբություն տարանք մենք: Հենց այն պատճառով, վոր մենք մասսաներին ժամանակին տարանք գեղի ապստամբություն, այն, հենց այն պատճառով ել մենք հաղթեցինք: Անա, թե վորտեղ և միասնական ըլոկի իդեալի արմաները: Միասնական ձակատի տակտիկան, խոկապես, նրա համար և հայտարարված լենինի կողմից, վոր հեղտացնի կապիտալիստական լերկիրների բանվոր դասակարգի միլիոնավոր մասսաների կոմմունիզմի կողմը անցնելու գործը, մասսաներ, վորոնք վարակված են սոցիալդեմոկրատական համաձայնողականության նախապաշտամունքով: Ոպպողիցիալի մեղքն այն և, վոր նա այս տակտիկան ամբողջությամբ մերժում են: Մի ժամանակ տարվելով, այն, հիմարաբար ու անժաման հափշտակելով այս տակտիկայով, նա ամեն կերպ վողջունում եր Անգլիայում Փրիմավոր Խորհրդի հետ համաձայնության գալու գործը, կարծելով, վոր այդ համաձայնությունը հանդիսանում և «խաղաղության մեծագույն լերաշխիքներից» մեկը, «մեծագույն լերաշխիքներից մեկն ընդդեմ ինտերվենցիալի», «ուժիորմաքը Յելլուպայում անվնաս դարձնելու մենարուրջ միջոցներից մեկը»: (Նայել Զինովիի զեկուցումը՝ Համ. Կի (բ) XI համագումարում): Սակայն սարսափելի հուսախարվելով Պերսիաների ու Հիքսերի ոգնությամբ ուժիորմաքն անվնաս դարձնելու հուսափելի մեջ նա մյուս ծալքահեղության մեջ ընկապ՝ բոլորովին մերժելով միասնական ձակատի տակտիկայի գաղափարը: Անա, ընկերներ, մի տարածախնություն եւ, վոր ցուց և տալիս ոպպողիցիալի կատարյալ անջատումը միասնական ձակատի լենինի լան տակտիկայից:

Յոթերորդ հարցը վերաբերում է լեռինյան կուսակցականության ու լենինյան միասնականությանը՝ ՀԱՄ ԿԿ ու Կոմինտերնի մեջ: Ոռոպղոցիցիան բոլորովին խոզում և կապերը լենինյան կազմակերպչական սկզբունքների հետ, կանգնելով լերկրորդ կուսակցություն և նոր ինտերնացիոնալ կազմելու ճանապարհի վրա:

Անա, ձեզ այն լոթ հիմնական հարցերը, վորոնք վկայում են, վոր այս հարցերում ոպպողիցիան գլորվել և զեղի մենշեկիզմը:

Կարելի՞ չե արդուք ոպպողիցիալի այս մենշեկա՛ ան հայացքները համատեղել եր կուսակցության գաղափարախոսության, մեր կուսակցության ծրագրի, նրա տակտիկայի, կոմինտերնի տակտիկայի, լեռինիզմի կազմակերպչական սկզբունքների հետ: Յերրիք, միշտ բոպե:

Դուք կասեք: Ինչպես կարող եր ալղափիսի ոպպողիցիա ծըն-

մել մեղնում, վարտեղ են նրա սոցիալական արմատները: Կարծում եմ, վոր ոպպողիցիալի սոցիալական արմատները թագինված են քաղաքի մանր-բուրժուական խավերի քայլքայման մեջ մեր զարգացման պայմաններում, այդ խավերի պրոլետարական դիկտատուրայի ուժիմից անբավական լինելու փաստի մեջ, այդ խավերի այն ձգտման մեջ, վոր աշխատում ե փոխել այդ ուժիմից, «բարեկալի» նրան բուրժուական դիմոկրատիա հաստատելու վագով: Արդեն վերեն ասացի, վոր մեր առաջադիմության հետևանքով, տնտեսության սոցիալիստական ձեերի տեսակարար կշորի աճման հետևանքով մանր բուրժուազիալի մի մասը, հատկապես քաղաքացին բուրժուազիան, քայլքայմում ե: Ոպպողիցիան արտացորում ե այդ խավերի՝ պրոլետարական հեղափոխության դեմ ունեցած դժգոհությունն ու անբավականությունը:

Անա, թե վորտեղ են ոպպողիցիալի սոցիալական արմատները:

դ) Ե՞նչպես անենք ապա: Ի՞նչպես վարվենք ապա ոպպողիցիալի հետ: Նախքան այդ հարցին անցնելը, կկամենալի պատմել Տրոցկու հետ ունեցած միատեղ աշխատանքի մի փորձի պատմությունը, մի փորձ, վոր կատարել ե ընկեր Կամենել 1911 թ.: Այդ մի շատ հետաքրքիր հարց ե: Մանավանդվոր նա մեր ձեռքը կատա մի բանալի, վորը կողմի մեզ արված հարցին ուղիղ մոտենալու գործում 1910 թվին մեր ԿԿ պլենումն եր արտասահմանում: Նա քննում եր բոլշևիկների ու մենշեկիների, մասնավորապես Տրոցկու, փոխնարարերության խնդիրը: (Այն ժամանակ մենք մի մասն եինք մենշեկիների հետ ունեցած միենույն կուսակցության և մեզ փրակցիա ելինք անվանում): Պենումն արտահայտվեց հոգուտ մենշեկիների, ուրեմն, նաև Տրոցկու հետ հաշտվելուն, վորին զեմ եր լեռինը, հակառակ եր: Լեռինը մնաց փոքրամասնության մեջ: Իսկ կամենելը: Կամենել վորոշեց իրականացնել Տրոցկու հետ միատեղ աշխատելու միաքը: Յեվ: Ինարկե, նա այդ միտքն իրականացնում եր լեռինի գիտությամբ ու համաձայնությամբ. վորովհետեւ լեռինն ուղում եր Կամենենին վորձով առացուցանել, վոր մնասակար և անթույլատրելի յե Տրոցկու հետ միասին բոլեկիզմի դեմ աշխատելը:

Էսեք, թե այդ մասին ինչ է պատմում ինքն ընկ. Կամենել.

«1910 թվին մեր փրակցիալի մեծամասնությունը փորձ արեց հաշտվել ու համաձայնության գալ Տրոցկու հետ: Վլադիմիր Իլիչն այդ փորձին վերաբերում եր խիստ բացառաբար, և կարծես «ի պատիժ» այն բանի, վոր յես համառում

եմ, թե պետք ե ընկեր Տրոցկու հետ անպատճռու համաձայնության զալ պնդում եր, վոր հատկապես յես պետք ե կենարոնական գոմիտելի կողմից՝ իբրև վերջինիս ներկայացուցիչ, ուղարկվեմ ընկեր Տրոցկու թերթի խմբազրությունը՝ Այդ խմբազրութանը մի քանի ամիս աշխատելուց հետո՝ 1910 աշնան սկզբին, համոզվեցի, վոր Վլադիմիր Իլիչն իրավացի լիր իր բացասական վերաբերմունքով գեղի իմ «հաշտարար» գիծը, և յես, նրա համաձայնությամբ, գուրս լեկու ընկեր Տրոցկու որգանի խմբազրությունից: Իմ՝ ընկեր Տրոցկու հետ ունեցած՝ այդ խղումը նշվեց կուսակցության կենարոնական որդանում տպված մի շարք սուր հողվածներով: Հենց այդ ժամանակ ել Վլադիմիր Իլիչն առաջարկեց ինձ գրել մի բրոշուր, վորը պիտի լիկվիդատոր-մենչեղիկների ու ընկեր Տրոցկու հետ ունեցած տարածականությունների ընդհանուր հանրազումարը տար: «Դուք համաձայնության փորձ արթի հակաբոլշևիկան խմբազրութերի ամենածախ թեվի (արցոցկիսատական) հետ, գուրք համոզվեցիք, վոր համաձայնությունն անհնար ե, ուստի զուք ել պարտավոր եք գրել՝ այդ ընդհանրացումն անող բրոշյուրը», — ասում եր ինձ Վլադիմիր Իլիչը: Բնական ե, վոր Վլադիմիր Իլիչը հատկապես պնդում եր այն, թե բոլշևիզմի ու արցոցկիզմի հարաբերությունների մեջ յեղած բոլոր խնդիրները պետք ե պարզվեն, բոլոր ասելիքներն առվեն՝ մինչեւ վերջը»: (Լ. Կամենների «Յերկու կուսակցություն» բրոշյուրի առաջարանը, մայիս, 1924 թիվ):

Ի՞նչ հետևանքներ ստացվեցին զրանից: Շարունակությունը լուր:

«Տրոցկու հետ միատեղ աշխատելու փորձը, — համարձակում եմ ասել, իմ կողմից անկեղծորեն կատարած, վորի մասին վկայում են ներկայում Տրոցկու կողմից շահագործվող նամակներս ու մասնավոր խոսակցություններս, — ցույց տվեց, վոր հաշտարարությունն անզուսպ տեմպով զորվում ե գեղի լիկվիդատորության պաշտպանությունը և վըճռապես անցնում ե լիբջինիս կողմը: (Ցու. Կամենն.՝ «Յերկու կուսակցություն», 1911 թ. էջ 136):

Ապա.

«Ո՛, յեթի «արցոցկիզմը» հաղթեր՝ իբրև կուսակցության տրամադրություն, — ի՞նչ լայն ասպարեզ կբացվեր լիկվիդա-

տորության, ոտղովիզմի ու կուսակցության բոլոր հակամարտ ուժերի առջև» (Նույն գրքում, էջ 143):

Ահա ձեզ, ընկերներ, Տրոցկու հետ միատեղ աշխատելու փորձը, (Զայներ՝ «Խրատական փորձ»):

Այս փորձի հետևանքները պատկերացրել ե ընկեր Կամեններ մի հատուկ բրոշյուրի մեջ, վոր լույս ե տեսել 1911 թվին, «Յերկու կուսակցություն» անունով: Չեմ կատկածում, վոր այդ բրոցուրը մեծ ոգուտ ե տվել բոլոր այն ընկերներին, վորոնք գեն Տրոցկու հետ աշխատակցելու պատրանքն ունեին: Յեվ յես ահա այսպիսի հարց կատած, արգուք ընկեր Կամենները չեր կամենա «Յերկու կուսակցություն» վերնագրով մի նոր բրոցուր գրել՝ ներկայում Տրոցկու հետ աշխատելու իր նոր փորձի մասին: (Ընդհանուր ծիծաղ: Ծափանարություններ): Գուցե այդ ոգասակար կիները Ինարկե, յես չեմ կարող լերաշխավորել, վոր Տրոցկին այժմ, այն ժամանակիտ նման, նրա նամակներն ու մտերիմ խոսակցությունները չի ոգասագործի հենց իրեն՝ Կամենների գեմ: (Ընդհանուր ծիծաղ): Բայց չարժե զրանից վախենալ: Համենան գեպս, այստեղ հարկավոր ե ընարություն անել, կամ պիտի վախենալ, վոր Տրոցկին կոգտազործի Կամենների նամակները և կհրապարակի նրա գտղունի խոսակցությունները Տրոցկու հետ, և այդ գեպուտ կուսակցություննից դուրս մնալու վտանգ կա, կամ պիտի մի կողմ նետել ամեն մի վախ և մնալ կուսակցության մեջ: Այսպիս հգըրված հարցն այժմ, ընկերներ: Կամ մեկը, կամ մըուսը:

